

Վ Ա Ր Փ Ա Ր Ա Ն

ԻՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐ

1883 Յ. ՏԱՐԻ

№ 2

ՊԱՐՈՂԻԿԱՍՈՒԿՈՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՄՈՍԿՆ:

Հայոց գործերի մէջ եթէ ոչ առաջին՝ ամենապիտաւոր խնդիրներից մէկն է այժմ կոթուղիկասական խնդիրը, որ Հանգուցեայ մեր Վեհապետի ժառանանից յետոյ զբողեցնում է թէ մեր Հասարակութիւնը և թէ մեր ժամուրդը Եւ իսկապէս այդ անձնաւորութիւնը այնպիսի մեծ դեր է խաղում մեր մէջ, որ ամենայն իրաւամբ նուիրելու է դրան շուտ և շատ բազմակողմանի մշակուած խորհրդածութիւնները:

Կարծիք չբերուի, որ ընդհանուր ամենայն Հայոց կաթուղիկասի գործունէութեան ասպարէզը շատ և շատ ընդարձակ է և նրա վրայ գարձաձէ է բոլոր Հայոց աշաղբութիւնը՝ թէ երասիսի, Կուրի, Դանի, Վոլդալի և Նեվալի ամերիկացի և թէ եփրատի, Տրքիսի և Գանգեսի եզերքից: Ասպարէզը այնքան լայն է, որ մի մի Հայուէլ գործունէութեան բոլոր կողմերը Համարեմ թէ անհնարին է: Այստեղ են մեր եկեղեցիքը իրանց եկեղեցիականներով, այստեղ են վանքերը իրանց վանականներով, այստեղ է եկեղեցապատեան գումարների անվտանգ պահպանելու և անկեցնելու խնդիրը, այստեղ է դարձրով սրբազործուած մեր եկեղեցական ծէսերի և աւանդութիւնների վրայ արթնան Հսկողութեան Հագար, այստեղ է բոլոր ժողովրդի մէջ առաքինութիւն և արգարութիւն տարածելու և դէպի իւր կրօնն ու լեզուն ու աւանդութիւնները վառ ձգտողութիւնը: Բայց նրա ամենապիտաւոր Հսկողութեան աւարկան, կարող ենք Համարձակաբար ասել, է Հոգեւոր

դպրոցը, այն սրբութեան տաճարը, որ հիմն է մեր ապագայ լուսաւորութեան և ժողովրդի մտաւոր զարգացման:

Ինքը մեր բարեխնամ կառավարութիւնը, լաւ հասկանալով հաւասարապէս բոլոր իւր հպատակների մտաւոր զարգացման անհրաժեշտութիւնը, ամեն մի դաւանութեան տուել է իրաւունք ունենալու իրանց սեփական ուսումնարանները թէ օրացոյց և թէ աղջկանց համար: Եւ քանի որ ժողովրդի մէջ զարթել է անհրաժեշտ կարեւորութիւն իւր մանուկների մտաւոր զարգացման և քանի որ կառավարութեան արած ջանքերը իւր բազմազան գալրոցների սլահպանութեան և ընդարձակելու մասին բոլորովին լրացուցիչ չեն, չը կարողանալով բոլոր իւր ծոցը դիմողների մտաւոր ծարաւը յագեցնելու, օտար դաւանութեանց պատկանող աղջարնակութիւնք մեծ ծառայութիւն արած կը լինին իրանց միջոցներով սահմանել ուսումնարաններ՝ մի ընդհանուր նպատակին հասնելու, այն է՝ բանիբուն և զարգացած մարդիկ պատրաստելով հասարակութեան համար: Ամենայն ուսումնարանական տարեգլխին մենք անզաղար տեսնում ենք, որ տեղի անձկութեան պատճառաւ շատ մանուկներ մնում են պետական ուսումնարաններից դուրս, և այդտեղ մեր հայոց դպրոցը պարտաւոր է գոնէ մի մասամբ ծառայել ժողովրդին, իւր գիրկն առնելով այդ ուսումնաճարաւ երեխաներին:

Եւ մեր կառավարութիւնը անշուշտ շահուած կը լինի մեր ծառայութեամբ, որովհետեւ և մեր ուսումնարաններում տիրապետող ուղղութիւնը կը լինի համապատասխան տէրութեան նպատակներին: Մենք կը դատախարակենք մեր մանուկներին մեր ուսումնարաններում նայն իսկ պետական դպրոցներում ուսումն առած երիտասարդների ձեռքով և որքան էլ այս վերջինները հասկացած կը լինին տէրութեան բարի նպատակները, այնքան և մեր սեփական ուսումնարանները չեն շեղուի կառավարութեան նպատակներից: Մեզ աալիս է տէրութիւնը բարձր ուսումն առած մարդիկ, որոնք երբեմն միջոց չեն գտնում պետական ուսումնարաններում պաշտօններ գտնելու և իրանց սիրած դատախարակութեան գործը շարունակելու: մի թէ որ և իցե յանցանք կը լինի, եթէ այդպիսինե-

ըին հիւրասիրէ մեր դպրոցը և կրկնակի օգուտ տայ, մի կողմից այդպիսի երիտասարդին գործելու և շահուելու անպարէզ բանալով և միւս կողմից մեր սուսմնարանները մտակարարելով աւելի զարգացած և աւելի լաւ սլատրաստուած ուսուցիչներով:

Չը խօսենք շատ հին եղելութիւնների մասին, ասենք մտաւար անցեալի մասին վերաբերութեամբ այն հարցին, թէ որքան հնարաւոր է հայոց հոգևոր վարչութեան Պետի համար հիմնել և կառավարել հոգևոր դպրոցներ: Միայն ներսէս Ե-ի պէս մարդու զօրեղ ձեռքն էր, որ հիմնեց Թիֆլիսի ներսիսեան դպրոցը և նորոգ հանգուցեալ Գեորգ Բ: Ի պէս պեթի շնորհն էր, որ մենք ունեցանք Ս. Եջմիածնում Գեորգեան ձեմարան: Կաթուղիկսը ինքն ըստ ինքեան մի մարդ է և եթէ նա ժողովրդի ծառայ է և նրա մտաւոր զարգացման նախանձախնդիր, անշուշտ կարող է դառնալ մի ահագին զօրութիւն, որ մագնիտի պէս կը քաշէ դէպի ինքը ժողովրդի օժանդակութիւնը այդպիսի գործքի մէջ: Եւ մեր ժողովուրդն էլ, եթէ աւելի հին ժամանակներում, երբ ուսման կարիքը դեռ բոլորովին չէր զգացել, համակրող էր այդպիսի գործերում, կարծիք չը կայ, որ այժմ աւելի և աւելի կ'օժանդակէ իւր զաւակների մտաւոր զարգացման գործին: Հարկաւոր է միայն ուժգին ձեռք, որ մեր ապագայ Հոգևոր Պետերը և՛ պահպանեն մեր այժմեան դպրոցները և՛ հետզհետէ նորերը հաստատեն:

Եւ այժմ մենք որոնելու ենք այդպիսի մի զօրաւոր ձեռք, որ զայ մեզ մօտ և գործէ և մեզ էլ գործել տայ: Եստ և շատ մեծ մտադրութեամբ և զգուշութեամբ որոնելու ենք մի այդպիսի ոյժ, որովհետև յայտնի է, որ հունձք բազումք են և մշակք սակաւ: Մշակ է հարկաւոր մեզ և անձնանուէր մարդ, որ ոչ թէ մի այլ կողմնակի ձգտումներով բազմի մեր հայրապետական գահի վրայ, այլ որ լինի անխոնջ աշխատող, անբուն մշակ և ոչ իւր վարձը իսկոյն մեզանից սպասող, այլ առանց վարձատրութեան սպասելու աշխատող, և այնպիսին կըստանաց իւրը՝ ժողովրդի սրտի մէջ տպաւորելով իւր անունը և դրօշմելով պատմութեան

լիշատակարանի էջերում ոսկեգոծ տառերով իւր գործերը: Մեր ուսումնարանները բազմաթիւ են համեմատաբար, ունենք և բարձր հոգևոր ճեմարան, ունենք և միջնակարգ հոգևոր վիճակային դպրոցներ, ունենք և ստորին ծխական և գիւղական ուսումնարաններ և բոլորն էլ պահպանվում են մեր ժողովրդի ուղղակի կամ կողմնակի ձեռնառութեամբ: Մեծ պարտք պէտք է ընդունէ մեր նոր հոգևոր պետը՝ պահպանելու բոլոր մեր գոյութիւն ունեցող դպրոցները և մեծ և քաղցր իրաւունք պիտի ստանայ իւր օրինակով դրաւելու իւր կողմը մեր ժողովրդի համակրութիւնը՝ եղած դպրոցները ընդարձակելու և նորերը հիմնելու:

Աստուած տայ, որ մեր մէջ եղած ամենալաւ ոյժը հանդէս դուրս բերուի, այնպիսի մի անձնաւորութիւն, որ որքան էլ մինչև ցայժմ ծառայութիւն լինի արած դպրոցական գործում, այն բոլորը ինքը իրան համար մի չնչին բան համարէ և գահից գործելով, կարծէ թէ նոր է սկսում այդ սրբազան գործը: Առ ոչինչ համարէ իւր բոլոր անցած ծառայութիւնը և սկսէ աշխատել գահի վեհութեան և վսեմութեան համապատասխան: Եւ այն սառնութիւնը, որ երբեմն փաթաթում են մեր ժողովրդի վզին, բոլորովին կը վերանայ, որովհետև փորձով տեսել ենք, որ արժանաւոր և գործունենայ եկեղեցական պաշտօնեան միշտ իւր աջակից կուեննայ ժողովրդի սիրտը և գրպանը:

ՄՍԿԻՆԻ ԲՈՅՍԵՐ

(շարունակութիւն եւ վերջ *)

Բ.

ձանճակալը պատկանում է Դրօզերայի Հեռ մի և նոյն ընտանիքին. սա վերջին ժամանակ ենթարկուեցաւ շատ քըն-նութիւններին նորա մտով կերակրուելու յատկութիւնը քըն-նելու համար: Այս բոյսը վայրի դրութեամբ գտանվում է Ամերիկայի Հիւսիսային Կարօլինայի արևելեան մասի խոնաւ տեղերում և բաղկացած է աստղաձև սփռուած տերևներից, որոնք աւելի մեծ են և խոշոր քան Դրօզերայի տերևները: Նոցա տերևի կանթը տափակ է և տերևի պէս է: Տերևի թիթեղը բոլորակաձև է և բաղկացած է երկու բլթակից, որոնք մէջ տեղում շարժուն յօդ ունին. այդ յօդի միջնորդութեամբ բլթակները կարող են բարձրանալ և ծալուիլ: Բլթակների շուրջը նստած են մի կարգ կոշտ մազեր:



ձանճակալի տերևի ներքին կազմութիւնը շատ բանով զանազան է Դրօզերայի տերևի կազմութիւնից: Կոշտ մազերի ծայրերին մսանքներ չկան. այդ մազերը ընդունակ չեն գրգռուելու: Իւրաքանչիւր բլթակի վերին երեսի վերայ գնդա-

*) Տես «Վարժարան» № 1. Բ. Տարի:

են եկած երեք հատ թելիկներ, որոնք ընդհակառակն ձեռք տալուց շատ են գրգռվում, սակայն նոցա ծայրերը սուր են: Բացի այս մաշկային լաւելուածներից, բլթակի ամբողջ վերին երեսը, բացառութեամբ փերին մօտիկ տարածութեանը, խիտ ծածկուած է մանր կարմիր կամ ծիրանագոյն մասնքներով: Մասնքները կորթթնարդ են և նստած են փոքրիկ ծրղերի վերայ: Տերևաձև կանթի վերայ, տերևի ետևի կողմից և փերի մագերի խարսխի մօտ ցրուած են մանր աստղաձև նարինջ — մեխակի գոյն բարձրութիւններ ութը հատ շրջասփիւռ շառաւիղներով: Տերևների ստորին երեսի վերայ տեղ տեղ նկատելի են մանր սրածայր մագիկներ:

Այս բոլոր մասերի գործողութիւնը լիովին քննուած է: Ափերի մագերի գործողութիւնը մեքենայական է և միմիայն մեքենայական, որովհետև նոքա զգացողական չեն և չունին մասնքներ, սորա հետ չունին նաև ո՛չ համագոյց և ո՛չ մասնաւոր ինքնաբեր շարժողութիւններ: Ընդ հակառակն զգացողական թելիկները շատ գրգռուող են: Սոքա երբեմն ծայրին բաժանվում են երկու կամ երեք ճիւղերի և նոցա շփելուցը կամ թեթև դիպչելուցը բլթակների մէջ առաջանում է զգացողութիւն և սոքա ծալվում են: Այդ զգացողական թելիկները որ այդչափ շուտ գրգռվում են ամենաթույլ դիպչելուց անգամ, շատ նուազ զգացողութիւն են ցոյց տալիս երբ նոցա շարունակ հուպ ես տալիս: Ճանճակալի թելիկների և Դրօզերայի մասնքների մէջ եղած զանազանութիւնը բացատրվում է նոցա կեանքի զանազանակերպութեամբ: Մենք տեսանք թէ ինչ է կատարվում Դրօզերայի մէջ երբ նորան շարունակ հուպ ես տալիս. ճանճակալը չունի մածուցիկ հեղանիւթ որ ձեփէր միջատը, այլ սա որսվում է բլթակների արագ փակուելովը հենց այն միջոցին երբ մի թեթև զարկ ես տալիս թելիկներին: Թելիկները ոչինչ չեն արտահոսում, ոչինչ էլ չեն կլանում. սոքոյ խնկանքիս նրահապաններ են: Դրօզերայի շօշափելիքները գրգռուելուց թեքվում են և կուտակվում. այս երևոյթը չէ կատարվում ճանճակալի մէջ: Նոցա վերայ թափուող ջրային կաթիլներ չեն առաջանում բլթակների ծալուելը. նոյնը չէ կատարվում եթէ փչենք նո-

ցա վերայ: Այս պատճառաւ պահպանները քամու և ան-
 ձրևի ժամանակ զուր տեղ շփոթ չեն գցել. նոյնպէս շար-
 ժողութիւն չի առաջացնել նոցա մէջ արեգակի ճանազայ-
 թը, եթէ մինչև անգամ թելիկի վերայ կենդրոնանայ այն
 աստիճանի, որ չորացնէ նորան կամ փոխէ նորա գոյնը:

Մանր մասնքները, որոնք գտանվում են տերևի մակե-
 րևոյթի վերայ ունեն արտահոսելու և կլանելու յատկութիւն.
 քայց նոքա ոչինչ չեն արտահոսում մինչև որ և է կենդա-
 նին նոցա գրգռու չը պատճառէ: Եթէ գրգռու պատճառովը
 կենդանին չլինի այլ ուրիշ կարգի առարկայ, մասնքների վե-
 րայ խոնաւութիւն չի առաջանալ. իսկ եթէ դնել մսի կտոր
 կամ ճղտած ճանճ, նսքն իսկոյն առասուլթեամբ արտահո-
 սում են հեղանիւթ: Երբ բլթակները ծալուած են, պահե-
 լով իւրեանց մէջ միջատին, ամբողջ մակերևոյթի մասնքնե-
 րը մեծ քանակութեամբ արտահոսում են հեղանիւթ: Ի հաս-
 տատութիւն սորա՝ Դարվինը մի քանի զէպքեր է առաջ
 բերում: Մի անգամ տերևի վերայ գրուած էր խորանարդի
 ձևով ձուի սպիտակուցի փոքրիկ կտոր. քառասուն և հինգ
 ժամից լետոյ տերևը կարել էին և նորանից հոսել էր մի
 կաթիլ հեղանիւթ: Միւս անգամ տերևի մէջ ութ օրուայ
 ընթացքում զանաւազ էր խորոված մսի կտոր. երբ տերևը
 ինքն իրան բացուեցաւ, նորա վերին մասի ձախօսի մէջ հա-
 ւաքուել էր այնքան հեղանիւթ, որ վայր էր թափուել: Յե-
 տոյ տերևի վերայ գրուած է եղել ճղտած մեծ ճանճ. դնե-
 լուց առաջ տերևի բլթակներից մէկը կտրել էին մինչև իա-
 ըխտը, այնպէս որ ճեղք էր բացուել նրի միջով տերևի հե-
 ղանիւթը կանթի վերայով. հոսում էր ինն օրուայ ընթաց-
 քում, այսինքն բոլոր այն ժամանակ քանի որ փորձ էին
 անում:

Կուտակումն, որ նկատեցինք Դրոզերայի մէջ, ճանճա-
 կալի մասնքների մէջ աւելի պարզ նկատելի է: Բորկածնի
 նիւթերի ազդեցութիւնից իւրաքանչիւր խորշի բովանդակու-
 թիւնը կուտակվում է, ներկայացնելով պրոտոպլասմայի շատ
 գեղեցիկ մութ, բաց ծիրանագոյն կամ անդոյն գանգուածներ:
 Մանր ութ հատ շառաւիղով բարձրութիւնների նշանակու-

Թիւնը չէ քննուած և նոցա մասին միայն ենթադրութիւններ կարելի է անել:

Տերևների այս տեսակ կազմակերպութեան մանրամասնութիւնք հարկաւոր է քննել վերաբերութեամբ նոցա շարժողութեանը: Երբ միջատը դիպչում է բաց տերևների պահպան թելիկներին, սոցա նա գրգռւ է պատճառում. այս գրգռւը անցնում է իսկոյն բլթակներին և սոքա ծայվում են որսալով միջատը. սորա խլալտոցը թելիկներին դիպչելով միայն զօրացնում ու արագացնում է բլթակների ծալուելը: Տերևի շուրջը գտնուող կոշտ մազերը խաչաձև անցնելով միմեանց մէջ արգելք են լինում միջատին դուրս գալ, եթէ միայն սա այնքան էլ փոքրիկ չէ: Մասնքներին դիպչելուց՝ յայտնվում է նոցա մէջ կլանելու յատկութիւն և նոքա սկսում են արտահոսել լորձանման թթու հեղանիւթ և այդ արտահոսումը շարունակվում է մինչև որ մասնքներին գրգռւ պատճառող առարկան այնտեղ է գտնվում: Այս հանգամանքի տակ միջատը լուծվում է որքան որ նա ընդունակ է լուծուելուն և տերևը այդ իւրացնում է: Այս ժամանակ մասնքների մէջն էլ կատարվում է պրօթոպլասմայի զանգուածի կուտակումը: Գործողութեան այս բոլոր անցքերի մանրամասնութիւնք քննուած են և մենք աւելորդ չենք համարում այնտեղ յիշել: Նախ և առաջ հաստատուած իրողութիւն է որ որսուած միջատը բոյսի սննդառութեան է ծառայում: Գտած են շատ միջատներ լորձանման հեղուկի մէջ որոնց վերայ ներգործել էր նա այնպէս ինչպէս լուծանող միջոց, որի ազդեցութիւնից միջատները շատ թէ քիչ կլանած էին: Այս դիտողութիւնը յետագայ ժամանակ փորձած էին հեղանիւթի մարսողական ընդունակութիւնը իմանալու համար և յայտնապէս սպացուցին այդ իրողութիւնը: Սորանից յայտնի եղաւ որ հեղանիւթը միշտ կուտակվում է յայտնի ժամանակում որսուած միջատի շուրջը երբ տերևը առողջ է և բռնած միջատը համապատասխան է նորան: Իմացուեցաւ և այն որ այդ հեղանիւթը հոսում է նոյն իսկ տերևից և ոչ թէ փոող միջատից և թէ մտի կտորները մի քանի ժամանակից յետոյ այդ հասարակ առաջացնում են նոյն գործողու-

Թիւնը, այսինքն տերւը նոցա ամուր որսել էր և նոքա շաղախուել են հեղանիւթով, որից համարեա բարձր կտորները լուծուել էին և կլանուել: Սորանից դուրս է գալիս որ այդ հեղանիւթը պէտք է համարել կենդանիների ստամոքսալիւ հիւթին համանման, որովհետև լուծում է միջատ և նորան ընդունակ է անոււմ տեղեւի կլանելու համար: Շատ տերւներ կորցնում են իւրեանց ընդունակութիւնը կամ մերթ ընդմերթ ոչնչանում են մի անգամ կերակրուելուց յետոյ. սակայն մի քանիսները նորից բացվում են երկրորդ կամ կարելի է երկրորդ անգամ որսալու համար, կամ գուցէ ընդունակ են կերակուր մարսելու համար միմիայն երկրորդ անգամ:

Երբ բլթակները ծալվում են անշունչ նիւթերից գրգռուելուց՝ նոցա ներքին մակերևոյթը մնում է կորընթարդ մինչև որ տերւը նորից բացուի: Բայց երբ նոքա որսում են մտի կտորներ կամ միջատ, այն միջոցին իւրաքանչիւր բլթակը հեռոցհեռ է ուղղվում է և ինչպէս երևում է մեծ ոյթով մտակցնում է որսը արտահասող մասնքներին: Երբ տերւը ոչինչ չէ որսում, բլթակները նորից ուղղվում են որ տևում է մի ամբողջ օրից մինչև երեսուն և երկու ժամ միջոցում. մինչև նոցա բոլորովին ուղղուիլը նոքա էլի պատրաստ են որսալու: Այնպէս գտած են որ վեց օրուայ մէջ տերւը կարող է ծալուել և նորից բացուել չորս անգամ:

Բլթակները չեն կորցնում իւրեանց զօրութիւնն երբ նոքա անշունչ առարկաներից գրգռուելով կուչ են գալիս. նոքա նոյն զօրութեամբ կարող են էլի մի քանի անգամ ծալուել մինչև որ իւրեանց ձեռնտու բան կորսան: Սորանից յետոյ փակ են մնում անորոշ ժամանակ, իսկ եթէ բացվում են երկար ժամանակ անզգայ են լինում: Չորս դիպուածում տերւները միջատ որսալուց յետոյ այլ ևս չբացուեցան և հեռոցհեռ է թառամեցան. մի դիպուածում նոքա ճանճը իւրեանց մէջ պահած փակ մնացին տառն և հինգ օր միւս դիպուածում — քսան և չորս օր թէև ճանճը փոքր էր երրորդում — քսան և չորս ժամ երկայնոտ մոծակը իւրեանց մէջը ունեւելով: Երկու դիպուածում երբ տերւները որսել

էին շատ մանր միջատներ, նոքա բացուեցան այնքան շուտ կարծես ոչինչ չէին որսած:

Այն բոլոր դիպուածներում երբ տերևները նորից բացվում էին երկար ժամանակ փակ դրուժիւնից յետոյ ունենալով իւրեանց մէջ միջատներ, միս կամ այս տեսակ նիւթերը, նոքա մի քանի օր այնքան անզգայ են եղել որ զգացողական թելիկներին դիպչելուց անգամ ոչինչ տպաւորութիւն չէին արտայայտում: Պէտք է ենթադրել որ ճանճակալի մարսողութեան ընդունակութիւնը անսահման չէ; ինչպէս և բարձր կենդանիների մէջ: Չափազանց շատ կերուկուելուց նոցա հետ էլ կարող է կաթուած պատահել:

Բացի Դրոզերայից և ճանճակալից կան էլի ուրիշ բոյսեր, որոնք պատկանում են նոյն ընտանիքին և նոցա նման ունին մսակեր յատկութիւն թէև աւելի պակաս աստիճանի բայց և այնպէս չեն զանազանվում վերև յիշածներից:

Մի փոքրիկ ջրային բոյս որ կոչվում է Ալգրովանդա *Aldrovanda vesiculosa* պատահում է Եւրոպայում, Աւստրալիայում և Հնդկաստանում: Չնայելով որ այդ բոյսը ունի միմեանցից այդքան հեռաւոր հայրենիքներ, ամենայն տեղ նա միևնոյն յատկութեամբ է լինում: Սա չունի արմատներ և լող է տալիս ջրի մէջ մանր կանաչ աստղերի ձևով: Տերևները դասաւորած են ցողունի շուրջը օղակաձև աստղերի պէս: Իւրաքանչիւր տերևը բաղկացած է երկու կիսակլոր բլթակից, որոնք նստած են լայն կանթի վերայ: Եւրոպայում սովորական բարեխառնութեան ժամանակ բլթակները առհասարակ միասին են ծալուած, բայց յաջող հանգամանքներում նոքա բացվում են ինչպէս խիտուշի փեղկերը:

Այս փոքրիկ բոյսի պատմութիւնը և խորհրդաւոր յատկութիւնները շատ քիչ են յայտնի: Անշուշտ կարելի է ենթադրել որ սորա տերևները կենդանիներ որսալու համար են ծառայում: Նոցա երկայն մազերը երևի զգացողական են, նոցա մսանքները պէտք է որ ընդունակ լինին արտահոսելու մածուցիկ հեղանիւթ: Մի խօսքով պէտք է ենթադրել որ սա ունի մսակեր բոյսերին յատուկ ընդունակութիւններ,

բայց և այնպէս սորա մասին ցայժմ ճիշտ քննութիւններ չեն արած:

Պօրտուգալիայում և Մարոկկոյում բուսնում է մի նշանաւոր և հազուադիւր բոյս Իրօզօֆիլլում լուզիտանիկում — *Drosophyllum lusitanicum* անուանով: Սպօրտօյի շրջակայքում սա պատահում է մեծ քանակութեամբ և այնտեղ գիւղացիները նորան անուանում են «ճանճոր» և ճանճեր որսալու համար նորան կախ են անում բնակարանների մէջ: Սորա մի քանի դիւլիմ երկայնութեամբ տերևները բարակ թելիկների պէս են: Սոցա վերին երեսը կորընթարդ է, մէջ տեղում ունենալով մի խողովակ, իսկ ստորին երեսը գոգաւոր է: Երկու երեսներն էլ ունին վարդագոյն կամ ծիրանագոյն շօշափելիքներ կորընթարդ գլխարկով որոնք լսնուած են զանազան երկայնութեան ծղերի վերայ: Այդ շօշափելիքները արտահոսում են մաճուցիկ հեղանիւթ խոշոր կաթիլներով:

Բայցի շօշափելիքներից՝ տերևների վերայ նստած են շատ մանր, աննկատելի պարզ աչքի համար, անգոյն բայց շօշափելիքների պէս կազմուած մասնքներ: Այս մասնքները զանազանվում են շօշափելիքներից նորանով որ արտահոսում են հեղանիւթ միայն այն ժամանակ, երբ զրգուած են լինում: Թէ մասնքները և թէ շօշափելիքները ընդունակ են կլանելու բորակածնի նիւթեր: Երբ այս ճանճորսի վերայ նստում է միջատ, սորան իսկոյն կպչում է շօշափելիքից արտահոսող հեղանիւթի կաթիլը. քանի որ միջատը շարժվում է կաթիլներ աւելանում են և վերջապէս միջատը բոլորովին ծածկվում է այդ մաճուցիկ հեղանիւթով, որից նա կորցնում է ոյժ և սատկում է տերևի վերայ գտնուած փոքրիկ նստադիր մասնքների վերայ: Շօշափելիքները շարժուելու ընդունակութիւն չունին, ուստի անզգայ են մնում միջատի դիպչելուց: Միջատները որսվում են միայն արտահոսող հեղանիւթով: Շօշափելիքների կլանելու ընդունակութիւնը ապացուցվում է նորանով, որ բորակածնի նիւթերից՝ նոցա մէջ եղած պրօտոպլասման կուտակվում է: Երբ միջատը ծեփուած շօշափելիքներից արտահոսող մաճուցիկ հեղա-

նիւթով ընկնում է թալկացած և սատկած փոքրիկ նստադիր մասնքների վերայ՝ սոքա դորանից գրգռվում են և արտահոսում են հեղանիւթ, որի մէջ կենդանին լուծվում է և այսօր լուծուածը ծծվում է: Սորանից երևում է որ այն գործողութիւնը, որով որսվում է միջատը այլ է, քան որ ունի դրօզերանմալ բայց այնուհետև երբ միջատը բռնվում է և գնվում փոքրիկ նստադիր մասնքների վերայ նորա լուծուելը ու մարսուելը ակներև միակերպ է կատարվում:

Ա. ՔԻՇՄԻՇԵԱՆՑ

Գ Ի Ց Ո Ւ Թ Ի Ի Ն Ը Ե Ի Ի Ս Ս Ա Մ Ս Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Նորէն Ռեցնան գիտնականը մի դասախօսութիւն արւս. Սորբոնի մէջ փիլոսոփեայ բնաբանի վրայ: Առաջարկում ենք ընթերցանել և նրա մտքերի համառօտութիւնը, հանելով դարան „Le Temps“ րապրից:

Սովորութիւն է ասել „արաբացոց գիտութիւն, արաբացոց փիլիսոփայութիւն, իսլամական գիտութիւն, իսլամական քաղաքակրթութիւն“: Բայց արդեօք մի ճշմարտութիւն կայ այդ խօսքերի մէջ — անա այն խնդիրը, որ բնեկց Ռեցնան Սորբոնի համալսարանում Ֆրանսիայի գիտնական կանստի առջեւ:

„Ստեյ խօսում են արաբական գիտութեան եւ փիլիսոփայութեան մասին, ասաց նա, եւ յիշաւ միջին դարերի ընթացքում Արաբացիք շարունակ երկու դար մեր վարժապետները հանդիսացան. բայց այդ արաբական գիտութիւնն եւ փիլիսոփայութիւնը ոչինչ էր, բայց բէ յունաց գիտութեան եւ փիլիսոփայութեան մի գծում քարգմանութիւն“: Այն էր անա ճառախօսութեան բուն իմաստը:

Ռեցնան հեկց սկզբում ցոյց տուաւ իսլամական երկիրների այժմեայ անկումը, իսլամով կատալարուող պետութիւնների քայքայումը, միայն այդ կրօնով դաստիարակուող ազգերի մտաւորական ոգևորութիւնը: Ճշմարիտ մաննեղականի միտքը գոցուած է գիտութեան համար, անընդունակ է սովորել կամ ըմբռնել մի նոր գաղափար: Համոզուած լինելով, որ Աստուած հնմ որ կամենայ նորան է

տայիս ճոխութիւնն է. զօրութիւն, մօտիմը ատելով ատում է զիստութիւնը է. ամենայն ինչ որ կապ ունի Երոզական մտքի հետ:

Բայց ինչոյնս բացատրել որ 775 թ. սկսած մինչեւ տասներեքրորդ դարու կեսը, այսինքն ամբողջ 500 տարի նշանաւոր գիտնականներ է. իմաստասերներ են գտնուել իսլամական ազգերի մէջ է. որ իսլամական աշխարհը քրիստոնեականից գերազանց է հանդիսացել այդ միջոցին: Պատճառը այն է, որ այդ միջոցին իսլամը դեռ կատարեալ յայրանակ չէր կանգնել: Յունաց քաղաքակրթութեան ոգին երոզային հսկողող մեծ շարժումը ոչ թէ իսլամից սկիզբն առաւ, այլ իսլամին հակառակ է. նորանից անկախ յառաջ եկաւ:

Երբ 750 թ. Աբբասեան տոհմը յաղթեց Օմայեանին, նոր կրօնի կենդրոն դարձաւ Տիգրիսն է. Եփրատ գետերի միջավայրը, որ դեռ լիքն էր երբ է. իցէ արեւելքում յոյս տեսած մի շքեղ քաղաքակրթութեան հետքերով, որ հասել էր իւր կատարելութեան Սասանեան Խորով Նուիրվանի ժամանակ: Արաբեան ու ձեռակերտը դարելի ի վեր բարգաւաճում էին այդ երկրում, եւ մտաւորական գործունեութիւնն էլ մի նոր աշխարհ էր ստացել Խոսրովի շնորհով: Նա էր որ Կ. Պոլսից հալածուած փիլոսոփայութիւնը հիւրընկալեց էւ Հնդկաստանի սրբազան մատենաները քարգմանել տուաւ: Նորա ժամանակ Միջագետքը համարեալ թէ լիքն էր նեստորեան քրիստոնեաներով, որոնք քաջ հմուտ էին յունաց դպրութեան. բժշկական ուսումն էլ բոլորովին նոցա ձեռքումն էր:

Աբբասեանք վերականգնեցին Խորովների փառքը: Բաղտաղը անես թէ մի վերածնունդ Պարսկաստանի մայրաքաղաք դարձաւ: Յրանսիա կան Կարյուղեզներին ժամանակակից պերճ խալիֆները դեռ կիսատ մօլիմներ էին. նոքա շրջապատում էին իրանց անհասատներով, փարսիներով, քրիստոնեաներով էւ սոցա միջից էին ընտրում իրանց բժշկներին, պաշտօնեաներին էւ մանաւանդ ոստիկաններին: Նոքա ամեն բանով հետաքրքրվում էին էւ մանաւանդ այն ամենով, ինչ որ օտար էր էւ հեթանոսական. նոքա հետազօտում էին Հնդկաստանը, հին Պարսկաստանը էւ յատկապէս Յունաստանը: Ճշմարիտ է, որ երբեմն երբեմն մոլեռանդ մօլիմները տարօրինակ յետադիմութիւն էին քարգում արքունեաց մէջ. որ մի մի ժամանակ խալիֆները երկիրյաժ էին դառնում էւ մատնում էին իրանց անհասատ կամ ազատամիտ բարեկամներին. բայր փոքր ինչ յետոյ նորից շնջում էր ազատութեան ոգին էւ խալիֆները, այստրուած գիտնականներին յետ կանջելով, դարձեալ սկսում էին ազատ կեանք վարել պայատի մէջ ի մեծ գայթակղութիւն ճշմարիտ մօլիմներին:

Այդպէս է բացատրվում Բաղդադի այն հաճոյական էւ գրաւիչ քաղաքակրթութիւնը, որի պատկերը „հազար ու մի գիշերների“ շնորհով տպարուած է ամենքիս մտքում: Խստակրօն օրբողք

սիայի ժամանակաւոր բույութեան պատճառով յառաջ եկաւ մի փիլիսոփայական եւ գիտնական շարժումը եւ քարգմանութեան Արիստոտելի ևնցիկոսիդիան, Էրկիդեսի եւ Գալիլեյի գրութեանց եւ միով բանիւ այն ժամանակուայ բոլոր յունաց դպրութիւնը: Այլիևդին իսլամի մեջ բանաստեղծական փիլիսոփայութիւն (rationalisme) մտքեց. Այնարաբին եւ Ավիսենը ամենամեծ իմաստասերների կարգն անցան: Աստղաբաշխութիւնն եւ այգեբբան գարմանայի կերպով ծակեցան, քիմիան գտան (distillation) օրէնքները գտաւ, վատօղն էլ գուցէ նա ննարեց: Արեւելքին հետեւելով, Սպանիան էլ ինքն իրան ուսման տունաւ եւ այս տեղ ժբ. դարում Հիւհադեանի, Հիւ Թօֆալիի եւ Ավերրօսի շնորհով մարդկային միտքը այնպիսի մի բարձրութեան հասաւ, որի վրայ դարերէ ի վեր չէր ամբարձած: Անա այդ մեծ ֆիլիսոփայական շարժումն է, որ կոչվում է արաբական, միջդէռ. իսկապէս դա յայն—աասանեան է, կամ յաւ եւս — յունական:

Այդ շարժմանը կենսական սնունդ տուող տարրը Յունաստանից էր գալիս. այդ իսաւար ժամանակներում մի գիտնական այն ջափով միայն արժեք ուներ, որ ջափով որ տեղեակ էր հին Յունաստանին: Յունաստանն էր գիտութեան միակ աղբիւրը: Սակայն վերոյիշեալ շարժման վարկը պետք չէ շատ ստորացնել, այլ հարկաւոր է խոստովանել, որ մի որոշեալ ժամանակի ընթացքում իսլամին ենթարկուած ազգերի մեծքով պահպանութեամբ Յունաստանի մտաւորական աւանդը:

Յունաց գիտութեան եւ փիլիսոփայութեան գրութեանց արաբական քարգմանութիւններով էր որ Արաբական խմորութեամբ իւր հանձարի բացուելուն նպատաւոր հին դասական դպրութեամբ:

Սակայն Ռեցան դարձեալ պնդում է, որ այդ բանում լեզուից գաւտ արաբական ոչինչ չըկար. արաբական տարրը միայն լեզուն էր: Արաբական ցեղը գործ չը շինեց. եւ այս այնքան ճշմարիտ է, որ արաբացի կոչուած փիլիսոփաների եւ գիտնականների մեջ Ալկինդիից գաւտ ոչ մի բուն Արաբացի չկայ: Միւս բոլորները Պարսիկներ են, Անդրօքսեանը, Սպանիացիք, Բուխարացիք, Սամարկանդացիք, Կորդովացիք, Սելիլիացիք: Սորա ամենքը ոչ թէ միայն արեամբ Արաբներ չեն, այլ բնաւ արաբական ոգի էլ չունեն: Թէ եւ նոցա գրութեան լեզուն արաբականն էր, բայց այդ լեզուն շատ նեղում էր նոցա: Նոքա կաշկանդուած էին դորանով, ինչպէս որ միջնադարեան գիտնականները կաշկանդուած էին լատիներէնով: Արաբական լեզուն որ այնպէս յարմար է բանաստեղծութեան, մասամբ էլ պերճախօսութեան, մի շատ թերի գործիք է վերացական ուսումների համար: Արաբական փիլիսոփաներն եւ գիտնականները բաւականին վատ գրողներ են:

Եթէ վերոյիշեալ շարժումը արաբական չէ, իսլամական է՝ չէ։ Եւ բոլորովին պարսիկների, քրիտոսեանների, հրեաների, իսմայիլացիների եւ իրանց յատուկ կրօնի դէմ ներքուստ ապստամբած մուսլիմների մի գործ է։ Իսկական մուսլիմներից նա ոչինչ չընդունեց, այլ միայն նզովք։ Այդ առողջափառները գիտութեան արբանեկողներին գօյ դիք էին անուանում, այսինքն, անհաւատ։ Ճեծում էին նոցա փողոցներում, այրում էին տների մէջ, եւ շատ անգամ կտաւափարօքիւնն էլ մահուան էր մատնում նոցա՝ խռովանին հաճոյանայու համար։

Միջին դարերի սկզբում իսլամը համբերում էր փիլիսոփայութեան, սրովհետեւ նորան խափանելու ոյժ չուներ. եւ ոյժ չուներ, պատճառ որ ինքն էլ դեռ ամբաստնութեամբ չէր եւ ան ու՛ սարսափ ազդելու միջոցներից գուրկ էր։ Այդ միջոցին նա դեռ ներքուստ խախտում էր մօքապետեան կողմում բողոքականութեամբ եւ ուրիշ մի քանի աղանդներով։ Բայց հետզհետէ նորա աշակերտների հաւատը գորանում է եւ կրօնի ժամանակաւոր բույրօքիւնից լետոյ գալիս է դօգմայի բացարձակ իշխանութեան ժամանակը, էբբ հոգեւորի եւ աշխարհականի զանազանութիւնն արդէն իսպառ վերցվում է մէջ տեղից—եւ ջնաստացողին մարմնական պատիժ է տրվում։

Մտաւորական կեանքը դադարում է այնուհետեւ, եւ 1275 թ. սկսած իսլամական աշխարհը խորասուզվում է ամենաբանձք խռաւրի մէջ։ Յաղթական իսլամը ոտնակոխ է անում երկրագնդի ընդարձակ մասերն եւ նորա հարուածների տակ մտքի՝ ազատութեան՝ նըշոյլն անգամ կորչում է եւ վերջապէս Այ կորանի յայտնութեան վրայ համտատում մի պետութիւն հիմնելով, որի մէջ ազգերին կտաւափարողը դօգման է, նա իրազորում է այնպիսի մի գաղափար, որ ամենայն յատազօղիմութեան թշնամի էր եւ կլիցի ոտ միշտ։

Այդ ժամանակից ի վեր մինչեւ այս օրս ուսումնասիրութեան ոգին, մտաւորական կեանքը բոլորովին մարած է իսլամական աշխարհում։ Իսլամը գիտութեան մահացու հարուած տալով, ինքն իրան տպանեց եւ կտաւափեալ ապիկարութեան դատապարտեց։ Ներկայումս իսլամական մարդու բնին յասկանիչն այս համոզմութեան է, թէ գիտութիւնն եւ հետազօտութիւնը անպարդիւն, սնոտի եւ մինչեւ անգամ ամբարիշտ բաներ են, թէ ամբարիշտ է բնութեան ուսումը, որովհետեւ դա մրցումն է Աստուածութեան դէմ. ամբարիշտ է եւ պատմական ուսումը, պատճառ որ դա նախիսլամական դարերը քրքրելով, կարող է կենդանացնել հին մոլորութիւնները։ Եւ իբրեւ այսպիսի համոզման հետեւանք՝ մտքի ծուլութիւնն եւ անտարբերութիւնը—անտարբերութիւնն է մահմեդական մարդու համար։ Այլա՞ն ապամ—, Աստուած անէյի յա գիտե, ինչ որ կայ—այս է նորա բոլոր վեճերի վերջաբանը։

Իսլամական եւ եւրոպական մտքի մէջ եղած անագին տարբէ-

բութեան վրայ ունկնդիրներին գեր մի քերեւ զաղամբար տայու համար, Ռեքան կարդաց նոցա հետեւեայ սիրուն յիշատակարանը: Դա Մօստուլի կաղիլի պատասխանն է՝ Լեյարդին ուղղուած, որ դիմել էր նորան մի քանի գիտելիք խնդրելով քաղաքի ազգաբնակութեան, վաճառականութեան եւ պատմական հնութիւնների մասին.

„Ո՛վ իմ քաջանուն բարեկամ, ով մահկանացուների բերկրութիւն.

„Անօգուտ եւ միանգամայն վնասակար են այն բաները, ինչ որ դու խնդրումես ինձնից: Չընայելով որ ամբողջ կեանքս այս երկրումնեաննէլ, այնուամենայնիւ երբէք պատահած չէ, որ ես ուզենայի համրել մեր տները կամ քե կամենայի մեր բնակիչների քիւն իմանայ: „Եւ զայով այն հարցին, քե սրբան, ապրանք է դնում այս ինչ մարդը իւր ջորիի վրայ կամ քե այն ինչը՝ իւր նաւակի մէջ.—ճշմարիտն ասել, այդ բնաւ ինձ չվերաբերուող մի խնդիր է: Իսկ քե ինչ էր այս քաղաքի պատմական անցեալը,—այդ միայն Աստուած գիտէ եւ Նա միայն կարող է ասել, քե ինչքան մոլորութիւններով տոգորուած էին մեր բնակիչները Իսլամի յաղթանակից առաջ: Այդ բանը գիտենալու ցանկութիւնն անգամ վտանգաւոր է մեզ համար:

„Ո՛վ իմ բարեկամ, ով իմ գառնուկ—մի շանար իմանայ այն ինչ որ քեզ չէ վերաբերվում: Դու եկար մեզ մօտ եւ մենք քեզ բարի զայուստ մաղբեցինք. հեռացիր խաղաղութեամբ: Ես բոլորովին չեմ վշտանում խօսքերիցդ. որովհետեւ խօսողը մին է, լսողը ուրիշ: Ազգիկ մարդիկների սովորութեամբ դու անցել տեսել ես շատ երկիրներ եւ ոչ մի տեղ երջանկութիւն չես գտել: Իսկ մենք—օրհնեալ յինի Աստուծոյ անուկը—մենք այս տեղ ենք ծնուած եւ բնաւ չենք էլ ուզում հեռանալ մեր տնից:

„Լսիր, որդեակ. Աստուծուն հաւատալուց վեր իմաստութիւն չկայ: Նա է ստեղծել աշխարհս, արդեօք վայել է մեզ նորան հաւասարուելաւ փորձ փորձել, նորա արարչութեան զաղտնիքը քափանցելու յանդգնել: Տես այս աստղը, որ պտոյտ է զայիս միւսի շուրջը. դիտիր եւ միւս աստղը, որ մի ազի ունի ետեւից, եւ այնքան ու այնքան տարիներ է պահանջում զայու եւ հեռանալու համար. քոջ նորան, որդեակ. այն աջը, որ ստեղծել է նորան, քաջ գիտէ եւ առաջնորդել նորան:

„Բայց քերեւս կասես.“ Ո՛վ մարդ, յետ քաշուիր, որովհետեւ ես քեզնից անելի գիտուն եմ, եւ այնպիսի բաներ եմ տեսել, որ դու երազած անգամ չես“: Երբ կածումես, որ այդ բաները քեզ անելի լաւ մարդ են շինել, քան որ ես եմ, երիցս բարի լինի զայուսող. բայց ես օրհնում եմ Աստուծուն, որ Նա չէ մզում ինձ ջրպետք բաների ետեւից ընկնելու: Դու հմուտ ես այնպիսի բաների, որոնք ինձ բնաւ հարկաւոր չեն եւ չեն էլ հետաքրքրում, եւ ինչ որ դու տեսել ես,

այն բոլորը եւ արհամարհում եմ: Արդեօք քեզ մի երկրորդ ստամոքս կըտան այդ մեծ գիտութիւնը, եւ այդ խուզարկու աջքերդ, որոնք շրջումեն դէս ու դէն, արդեօք մի դրախտ կը գտնեն քեզ համար :

„Ո՛վ բարեկամ, եթէ կամենումես երջանիկ լինել, գրիր քիչ. „միայն Աստուած է Աստուած“: Երբեք չարութիւն մի գործի, եւ դու երկիւղ չես ունենայ ոչ մարդիկներից, ոչ էլ մանից, երբ որ հասնի վերջի ծամդ:“

Հուշակաւոր դասախօսը իւր ասելիքը մի գեղեցիկ ուսումնական դասաւարտութեամբ արարտեց: Մարդկութեան նպատակը այն չէ, առաց նա, որ մենք ինքնայօժար տգիտութեան մեջ հանգստութիւն որոնենք. մարդուս կոչումն է անողոր պատերազմ ստութեան դէմ, պատերազմ տգիտութեան դէմ, այսինքն՝ անդուս անդադար հետազօտութիւն, գիտութիւն: „Գիտութիւնը“, Ռընանի ասելով „հասարակութեան հոգին է, որովհետեւ նա խելք է: Ասիայում այժմս էլ կան բարբալոսութեան այնպիսի տարրեր, որոնցից յառաջ եկան երբեմն իսլամական հրոսակներն եւ Աֆիայի, Չինգիսխանի պէս վիթխարի հոսկաներ: Սակայն գիտութիւնը նոցա ճանապարհը փակում է: Եթէ Օմարը, Չինգիսխանը մի յաւարտիչիայի հանդիպած լինէին, նոքա իրանց անապատների սահմանից չէին կարանայ անցնել: Պետք չէ շփոթուիլ մտքի ծամանակաւոր խտտումունքներից: Ի՛նչէր ջասացին սկզբում հրազենների գիւտի դէմ, որոնք սակայն շատ ու շատ նպատակներ քաղարակրութեան յաղթանակին: Ինձ գայով, ես համոզուած եմ, որ գիտութիւնը յաւ բան է, որ նա է միայն գենը տալիս իրանով գործուած ջարիքների դէմ եւ քէ վերջ ի վերջոյ նա կը ծառայէ միայն յառաջադիմութեան, ճշմարիտ յառաջադիմութեան, որն որ անբաժան է մարդկային պատուից եւ բանականութիւնից:

Փ. ՎԱՐԳԱՆԵԱՆ:



ԽՂՃԻ ՉԱՅՆԸ

ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱՍԱԿՈՒՄ*)

Խիղճ անուանում են առ հասարակ մարդու այն ընդունակութեանը, որով մարդս կարողանում է բարոյականութեան տեսակէտից գնահատել իւր բաղձանքները, ձգտումները և արարմունքները: Այդպիսի գնահատութիւնն ի հարկէ ենթադրում է որ կայ մի յայտնի չափ: Միայն այդպիսի չափի, այսինքն որ և է ընդհանուր կանոնի հետ մարդս կարող է համեմատել իւրաքանչիւր իւր առանձին բաղձանքը, իւրաքանչիւր իւր առանձին արարմունքը և համոզուել, թէ ո՞ր չափով նոքա համաձայն են այս ընդհանուր կանոնին, կամ ո՞րքան հակասում են նորան. հետևաբար ո՞ր չափով արժանի են կամ խրախուսանայ և կամ պախարակելու: Այս տեղից հետևում է խղճի գոյութեան մասին եղած երկու ենթադրութեանց հնարաւորութիւնը. կամ խիղճը՝ մարդուն բնածին մի յատկութիւն է, բարոյագիտութեան ընդհանուր կանոններին համաձայն կանոնաւորելու իւր բաղձանքները և արարմունքները և այն ժամանակ բարոյական օրինադիրքը կազմում է խղճի բովանդակութիւնը: Կամ եթէ հոգեբանօրէն այդ անկարելի է, խիղճը հանդէս է դալիս իբրև ձեռքն բերած ընդունակութիւն, և այնպէս է զարգանում, որ վերը յառաջ բերած ընդհանուր կանոնները փոքր առ փոքր, մաս առ մաս, մարդու սեպհականութիւն են դառնում: Բայց նախ և առաջ կասկած չը կայ, որ բոլոր ընդհանուր կանոնները ոչ այլ ինչ են, եթէ ոչ առանձին փաստերից հանած եզրակացութիւններ. երկրորդ, մանուկների վերայ տրած դիտողութիւնները ամենևին չեն տպաւորւում, թէ կայ բնածին, արտաքին ազդեցութիւններից անկախ ընդու-

*) Այս յօդուածը առնուած է Վ. այցի բնախր հեղինակութիւնից «*Lehrbuch der Pädagogik*» վերնագրով: (Waitz, *Algemeine Pädagogik*.) Cornelia, 29 դ հատոր, №2. Русское Образование 1879. № 4.

նակութիւն, որ արտասանէր բարոյական դատավճիռները: Ուրեմն եթէ իրօք որ և է ոյժի նշույն անգամ չը կայ և եթէ մենք չենք կարող սպացուցանել մի ուրիշ ոյժի գոյութիւնը, որը իսանգարում լինէր առաջին ոյժի երևալուն, ապա ուրեմն մենք ամենեւին իրաւունք չունենք ենթադրելու, թէ այդ ոյժը գոյութիւն ունի: Այդ ընդհանուր օրէնքը մեր դիպուածին յարմարացնելով, մենք պէտք է այն եզրակացութեանը դանք, որ խիղճը իբրև մարդու բնածին ընդունակութիւն, իւր բաղձանքները և արարմունքները բարոյականութեան տեսակէտից քննելու համար մեր մէջ գոյութիւն չունի: Այդպիսի ենթադրութեան ճշմարտութիւնը հաստատուում է նոյնպէս հետևեալ փաստերով: Չանազան անհատներ շատ տարբեր կերպով են զնահատում որ և է արարմունքի յարտբերական բարոյականութիւնը:

Այն կարծիքը պաշտպանողները՝ թէ խիղճը բնածին է, թէ և աշխատում են չը նկատել այն զանազանութիւնը, կամ աշխատում են, որքան կարելի է նուազեցնել, բայց նոյն իսկ իրողութիւնը աներկբայ է: Չի կարելի հերքել, որ խիղճը բաւականին փոփոխուում է, նայելով քաղաքակրթութեան աստիճանին, այն ազգութեանը կամ այն դարին, որին պատկանում է մարդս: Երբեմն մինչև անգամ մոլեռ սնդի խղճի առաջ սրբազան պարտք է հանդիսանում այնպիսի արարմունք, որին զգուանքով է նայում հանդարտ և ծանրախոհ մարդը: Մինչև անգամ մարմնոյ տեմ պերամետր (խառնուածքը) կարող է նշանաւոր տարբերութիւն յառաջացնել բարոյական զնահատութեան ժամանակ: Սանզվինիկի խիղճը, և ոչ այնպիսի մարդուն, որը կարողացել է բթացնել խղճի զգայականութիւնը, երբեմն յամառութեամբ լռում է այնպիսի արարմունքների ժամանակ, որին երբէք չէր համաձայնիլ իւր մէջ կենդրոնացած մարդը՝ մեկամաղձոտ տեմպերամենտով: Ի վերջոյ, իւրաքանչիւր իւր անձի վերայ բարեխղճաբար դիտող մարդ կարող է համոզուել, որ իւր խիղճն էլ միշտ յաջորդականութեամբ հանդէս չէ գալիս, որ նա մէկ անգամ աւելի դիւրութեամբ է հանգստանում, քան ուրիշ անգամ. որ նա փոփոխական է, և լիովին անյողգողդ չէ, մի խօսքով՝ որ

Ինչո՞ք ոչ մի Կրօնական չի կարող անմիջական է- անտրամադրական
Կրօնական համարու- լ այն հարցու- մ, թե՞ Երկրի է Բարին է- Երկրի է
չա՞րը:

Երկրի էութեան մասին յայտնած բացի վերոյիշեալ
երկու կարծիքները, կայ նոյնպէս և մի երրորդ կարծիք: Ա-
սում են, որ լիբաւի խիղճը մարդուս բնածին ընդունակու-
թիւն է, բայց թէ նա էլ, ինչպէս և մարդու միւս բնա-
կան ընդունակութիւնները, կարող է և զարգանալ և բթա-
նալ: Բայց այդպիսի հնարաւորութիւն ենթադրող անձինք
մոռանում են, որ նոյն իսկ սորանով արդէն հերքում են,
թէ կայ մարդու մէջ մի ձայն, որ անմիջապէս և անսխա-
լական կերպով վճռում է, թէ ո՞րն է բարին և ո՞րն է չա-
րը: Նոցա կարելի է այս հարցն առաջարկել. թե՞ նշանա-
կութիւն ունի այն բնական ընդունակութիւնը, որ սակայն
կարող է վերին աստիճանի սխալուել: Այդ դիպուածում կեն-
դանիների բնագրումը ըստ իւր նպատակայարմարութեան
առաւել գերազանց է: Եթէ մի անգամ ընդ միշտ անհրա-
ժեշտ կարևոր է համարուած դաստիարակութեամբ ըստ պատ-
շաճին զարգացնելու մարդուս բնածին խիղճը, այնուհետև
բնածին լինելու և չը լինելու մասին եղած բոլոր վի-
ճաբանութիւնները դառնում են դատարկ բառազննու-
թիւն: Ի հարկէ, կասկած չը կայ, որ կարելի է միայն
զարգացնել այն, որի սաղմը դոյութիւն ունի մարդկային
բնութեան մէջ: Բայց ինչպէս որ մարդս չունի բնածին սլայ-
ճառ և ճշմարիտ հասկացողութիւն և դատողութիւն գիտու-
թեան ուրիշ ճիւղերի մէջ, այնպէս էլ չունի և բարոյա-
կանութեան ասպարիզում: Հետևաբար, նորա խիղճը մի ինչ
որ ձեռն բերած բան է. նա այն ժամանակն է հանդէս գա-
լիս, երբ իւր ճանաչած բարոյականութեան ընդհանուր օ-
րէնքը իւր պատկերացման մէջ հանդիպում է դոյն այդ օ-
րէնքին վերաբերեալ մասնաւոր դիպուածին: Այն ժամանակ
նա սկսում է քննել, թէ համաձայնո՞ւմ է արդեօք այս մաս-
նաւոր դիպուածը ընդհանուր օրէնքի հետ թէ ոչ. իսկ նո-
րա այս դիպուածում արտայայտած դատավճիռը մենք ան-
ուանում ենք՝ խղճի ձայն:

Թէ ինչպէս են ծագում բարոյականութեան այս ընդհանուր չափերը (НОРМА) և ինչու համար սկզբում նորա զգացմունքի ձևով են արտայայտուում, — այդ հոգեբանութեան դործն է: Այս հարցերից առաջինի թէև կարճ, բայց ազդու պատասխանը տուեց Պեստալոցցին, ասելով մանկան մասին. «Մօր պապիերը, որ ոչ մի ընդէ չի բաց թողնում նորան, ահա նորա խիղճը»: Յիրաւի մանուկը իւր բաւոր հոգևով այնպէս ամուր կապուած է իւր մօր հետ, նա նորա համար այնպիսի թովիչ ոյժ ունի, որ երևում է նորան իբր ամենաբարձրագոյն հեղինակութիւն: Ահա սոյն այս հեղինակութեանը իւրաքանչիւր խոհեմ մայր պիտի սաստիկ մեծ արժէք տայ և ամենայն զօրութեամբ պէտք է ճշնի պահպանելու այդ հեղինակութիւնը: Մօր այս հեղինակութիւնը, ըզգացմունքների ներքին մտաւորութեան օրէնքի համաձայն, մանուկը վերագրում է նորա իւրաքանչիւր խօսքին, նորա իւրաքանչիւր գործողութեան. և ահա թէ ինչո՞ւ մօր իւրաքանչիւր հրամանը և մերժումը՝ մանուկը համարում է անպայման-ճիշտ և անխախտելի: Հետևաբար խղճի ոյժը ամենամատաղ հասակում ոչ այլ ինչ է, եթէ ոչ դաստիարակի հեղինակութիւնը: Սկզբում նա յայտնուում է լոկ միայն իբրև անձնական ոյժ, և միայն հետ զհետէ դառնում է ներքին ձայն, մի անդէմ ոյժ: Բարոյական օրէնքը, անդէմ, վերացական ձևով՝ բոլորովին մատչելի չէ մանուկին: Խղճի ձայնը թելադրում է նորան նոյն բաները, ինչ որ ասում են նորա համար հեղինակութիւն ունեցող անձինք. այսինքն դաստիարակները և առ հասարակ շրջապատող շրջանը (ընկերները): Ահա թէ ինչո՞ւ համար քաղաքավարութեան, վայելչութեան, կամ բարեխոհութեան որ և է կանոն չը պահանջը պակաս չեն անհանգստացնում մանկան խիղճը, քան թէ բարոյական օրէնքի խախտելը, եթէ որ դաստիարակը չի կարողացել մանկան աչքում վերջինիս առաւել մեծ նշանակութիւն տալ, քան առաջինների: Այդպիսի երևոյթների մնացորդները, որոնք գրեթէ միշտ նկատուում են մանկանց մէջ, շատ յաճախ կրկնվում են նա և հասակաւորների կեանքում: Երբեմն ամենաբարեխիղճ մարդիկ մինչև անգամ մեղք

էլ չեն համարում որ և է ստույթիւն, փոքրիկ անբարեխրդ-
ճուսթիւն և առ հասարակ ամեն տեսակ մանր-մունք յան-
ցանքներ. այն ինչ նոյն այդ անձինք կենցաղավարութեան
կամ քաղաքավարութեան որ և է կանոն խախտելիս աւելի սաս-
տիկ են անհանգստանում, քան պահանջում էր գործը: Այս
փաստը բաւականին լաւ երևում է այն մարդոց բարք ու վար-
քի մէջ, որոնք դաստիարակուած են յայտնի դասակարգի կան-
խակալ կարծիքներով և որոնք իրենց սահմանափակ մտա-
ւոր հօրիզոնի շնորհիւ չեն կարողացել այդ նախապաշար-
մունքներից բարձր կանգնել:

Ուրեմն խղճի ձայնը նոյն և նման չէ բարոյականու-
թեան ձայնին: Ընդհակառակն նա կախուած է մարդու ամ-
բողջ աշխարհատեսութիւնից; և կազմակերպվում է գլխա-
ւորապէս այն անձնաւորութեանց ազդեցութեան տակ, ո-
րոնք մատաղ հասակում ներկայանում են նորան որպէս հե-
ղինակութիւն: Ահա թէ ինչո՞ւ Համար դաստիարակը արգե-
լելիս կամ հրամայելիս սլետք է այնպէս արգելէ և հրա-
մայէ, որ մանկան աչքի առաջ պայծառ նկարագրուէր և նո-
րա հոգում խորը սպաւորուէր զանազան սլարտաւորութեանց
յարաբերական կարեորութիւնը: Միայն ստեղծելով
մանկան հոգում իրերի գնահատութեան ճշմարիտ և սարգ
ատիճանաւորութիւն, կարելի է խուսափել այն տեսակ ըս-
խալներից, որը վերը չիշեցինք: Դաստիարակի մտաւոր պակա-
սութիւնները, որոնց շնորհիւ չի կարողանում գնահատել իրե-
րը իրենց ճշմարիտ արժանաւորութեամբ, ծնեցնում են սանի-
կի մէջ սրտի պակասութիւններ: Մտնուկը գտնվում է անձնա-
կան հեղինակութեան ազդեցութեան ներքոյ. նա հնազանդվում
է կուրօրէն. նա գործում է բնազդամբ, սրտի անգիտակ-
ցական ազդեցութեան տակ: Մի անգամ ընդ միշտ կեղծ ուղ-
ղութիւն ստացած սիրտը շատ յօժարութեամբ չի գիշանում
ամենատոկուն համոզմունքներին և մինչև անգամ իւր սե-
փական պայծառ հասկացողութեանը. սրտի պակասութիւն-
ներն արմատախիլ անելը յաջողվում է միայն շատ դանդաղ
կերպով և մեծ ջանքերով: Որպէս զի կարելի լինի անգատել հա-
սակաւոր մարդուն համոզմունքների և հակումների, խելքի

և սրտի հետ ունեցած այդ տեսակ շատ յաճախ անպտուղ
 կովից, անհրաժեշտ է զարգացնել խիղճը հետևեալ ճանա-
 պարհով. նախ և առաջ հարկաւոր է արմատացնել մանկան
 մէջ բարոյական օրէնքին համաձայն բնազդումները, իսկ այնու-
 հետև հարկաւոր է այս բնազդումները, բարոյական հասկա-
 ցողութիւնները զարգացնելով՝ բարձրացնել մինչև պարզ գի-
 տակցութեան աստիճանը, լրացնել, աւելի ճշգրիտ որոշել և
 ուր անհրաժեշտ է՝ ուղղութիւն տալ դոցա:

Ապա ուրեմն՝ մանկական խիղճը ներկայանում է մեզ
 բաւականին անկատար, որ անկարող է գնահատել իրերը, ի-
 րենց ճշմարիտ արժանաւորութեամբ և օտար մարդոց խօս-
 քերից ու օրինակներից կախումն ունեցող: Այստեղից ուղղա-
 կի եզրակացնում ենք, որ մանուկը, ճիշտն ասած, բարոյ-
 ապաստան չունի, որովհետև չի կարող: Ճշմարիտ-բարոյական
 արարմունքի համար անհրաժեշտ է ոչ միայն կամքի ինքն-
 ուղղութիւն, որը երևում է ինչպէս իւր սեփական կրքե-
 րին հակառակելում, նոյնպէս և կողմնակի ազդեցութեանց
 մէջ, այլ և գործողութեանց լիակատար գիտակցութիւն,
 որը աւելի ուշ է յայտնվում: Սակայն եթէ մանուկն ընտե-
 րացել է առ իւր ծնողներն ունեցած սիրուց և յարգանքից՝
 իւր արարմունքների ժամանակ առաջնորդուիլ նոցա խօս-
 քով, այնուհետև դժուար չի լինիլ բարձրացնել նորան բա-
 րեւալատ մարդու աստիճանին, որ կատարում է իւր պարտ-
 քը Աստծուն սիրելով և գէպի նորա խօսքը յարգանք տա-
 ձելով, եթէ միայն մարդկային օրէնքները համաձայն էին
 աստուածային օրէնքներին: Որքան առաւել նա ընտելացել
 է անգիտակցաբար իւր գործողութիւնները բարոյականու-
 թեան օրէնքներին համաձայնացնելու և իւր մտաւոր հօրի-
 զոնը ընդլայնելու՝ այնքան առաւել նա համոզվում է,
 որ գործողութեան այդպիսի եղանակը ընդ նմին և ամենա-
 խօհեմն է. այնքան առաւել պայծառ է երևում նորան, որ
 իւր արարքների չափերը պիտի արտահոսեն իւր սեփական
 հոգուց: Այդ կերպով կայր հնազանդութիւնը դառնում է
 ճշմարիտ բարոյական ազատութիւն:

Այսպիսով համառօտապէս ցոյց տուինք այն ճանապար-

հը, որով պէտք է առաջ տանուի մանկական խղճի զարգացումը. այժմ հարկաւոր է պարզել մի հանգամանք, որ բաւականին դիւրացնում է լիշեալ զարգացումը հէնց այդ ուղղութեամբ յառաջ տանելու: Բանն այն է, որ մանկան խիղճը առաւել զգայուն է, քան հասակաւոր մարդունը, որ մանուկը չը գիտէ խաբել ինքն իրան: Հասակաւոր մարդը բաւականին շատ տեսակէտեր ունի, որոնց համաձայն կարող է քննել իւր արարմունքները. մանուկը երկար ժամանակ ունի միայն մի շատ պարզ տեսակէտ, այն է՝ թո՛ղ է տուած արդեօք այս ինչ արարքը թէ ոչ: Հասակաւոր մարդը ճանաչում է և կեանքը նորա պակասութիւններով, և մարդոց իրենց թուլութիւններով և շատ տարօրինակ բան կը լինէր, եթէ որ նա որ և է անբարոյական յանցանք գործելիս՝ չը կարողանար գտնել որ և է ստապատիր, ճարտար ապացոյցներ, որոնք արգարացնէին նորան իւր աչքում, կամ գոնէ հանդարտացնէին և ներումն շնորհէին նորան: Բացի գորանից, նա մինչև որոշ աստիճան արդէն ընտելացել է զիջումներ անելու իւր հակումներին, այդ բանում ոչինչ յանցանք չը տեսնելով: Ի վերջոյ նա գիտէ և շատ կարելի է, նոյն իսկ իւր վերայ փորձել է, որ բարոյականութեան ասպարիզումն էլ չը կայ կանոն առանց բացառութեան, որ բարւոյ և չարի մէջ եղած սահմանը այնպէս հաստատուն չէ, ինչպէս այդ թուում է առաջին անգամից, և որ հետեւաբար կարելի է, հարկը պահանջածին պէս փոքր ինչ չեա ու առաջ քաշել այդ սահմանը: Իւր արարքները գնահատելիս այս ամենը ոչընչացնում է նորա մէջ անաչառութիւնը, միացնում է գործի վերայ ունեցած հայեացքը:—Ահա թէ ինչո՞ւ համար բոլորովին հասկանալի է և հոգեբանօրէն բացատրելի, որ առ հասարակ մարդս որքան աւելի է ապրում, այնքան առաւել անհոգութեամբ է վերաբերվում զէպի բարոյական խնդիրները, այնքան առաւել հնարագէտ և ճարպիկ է դառնում ինքնախաբէութեան գործում: Նա արդէն այնքան յաճախ էր փայփայել իւր խիղճը, որ իւր արարքները գնահատելու հաստատուն և անսխալ չափօր արդէն կորցրել էր: Սովորաբար մարդս քանի մեծանում է, այնքան առաւել դիւրութեամբ կար

րող է հեռանալ բարոյական սկզբունքներից: Բայց եթէ պահ-
պանում է բարոյական տոկոսնութիւն և անարատութիւն,
նա դորանով առաւել շատ պարտական է բարոյական զգաց-
մունքների այն պաշարին, որ մնացել էր նորան մատալ հա-
սակից: Ահա թէ ինչո՞ւ համար դաստիարակը սէտք է առա-
ւել շատ օգտուի մանկական խղճի քնքոյշ զգայականութիւ-
նից, և իւր բոլոր ջանքերը գործ դնէ, որ հեռու պահի նո-
րան յանցանքից: Համառօտակի ցոյց կը տանք, թէ քնչպի-
սի միջոցներով կարելի է հասնել դորան:

Իհստ բարեխղճութեան ամենաէական հիմունքը «ը-
րարասիրտ»-ն է: Բարոյական ապականութիւնը գրեթէ
միշտ սկսվում է ստախօսութիւնից: Սուտը ներկայա-
նում է մանուկին իբրև ամենալաւ միջոց անհնազանդու-
թեան անսխորթ հետեանքներից ազատուելու համար. այս
պատճառաւ էլ հազիւ թէ գտնուի մի մանուկ, որ չը փոր-
ձէր օգտուելու այդ միջոցից: Եթէ մի որ և է հրաման խախ-
տելիս նորա մէջ խօսեց խղճի ձայնը, այդ դիպուածում յա-
ջողակ սուտը յայտնվում է նորա ազատիչը, և խեղտում այդ
ձայնը: Մինչև անդամ աւելի ևս: Սոյն այս յանցանքը երև-
ում է կարծես թէ ոչնչացրած, որովհետև նա կատարվում
է ուրիշների համար աննկատելի կերպով: Ահա այս վերջին
հանգամանքումն է կայանում ստի ամենավտանգաւոր ազդե-
ցութիւնը. եթէ յաջողեցաւ որ և է յանցանք ուրիշներից
ծածկել, այնուհետև այդ յանցանքը այնքան նշանաւոր և
պախարակելի չի թւում, որովհետև յաջողուեցաւ հեռացնել
նորա հէնց այն հետեանքները, որոնք միայն երկիւղ էին
պատճառում երեխային: Այդպիսով բխանում է խիղճը: Յայս
է յայտնուում, եթէ ստի օգնութեամբ միշտ կարելի կը լինի
ծածկել յանցանքները և այն ժամանակ նոյն իսկ այդ յոյսը
դառնում է զանազան արգելեալ յանցանքների աղբիւր: Ով
չի սովոր ստել, նա հեռու է այդ յոյսից: Արդէն բաւա-
կանին պարզ է, թէ քնչպէս մէկ անգամ յաջողուած սուտը
ծնեցնում է միւսը, քնչպէս ի վերջոյ սուտը դառնում է սո-
վորութիւն, անյաղթելի կիրք, թէ քնչպէս նա ամենակորս-
տաբեր հետեանքներ ունի մարդու բարոյականութեան հա-

մար: Ով չը գիտէ ստել, նա արդէն սորանով ստիպում է իրան միշտ այնպէս գործելու, որ հարկ չը լինէր ծածկել իւր արարքներէից մէկն ու մէկը. հետեաբար՝ արդարասիրութիւնը հանդէս է գալիս իբրև ամենայուսալի: մինչև անգամ կարելի է ասել բարոյականութեան հիւսիս յուսալի նեցուկ: Ահա թէ քնչու համար ամենից առաջ հարկաւոր է հոգայ, որ պահպանենք մանկան մէջ իրեն յատուկ պարզասրտութիւնը: Իսկ գորան կարելի է հասնել միայն այն ժամանակ, եթէ մանուկը իւր բոլոր զբաղմունքների միջոցին, իւր բոլոր մանր-մունր ուրախութեանց և տրտմութեանց մէջ, ամեն բանում և ամեն ժամանակ վայելում է իրեն շրջապատող անձինքներից անկեղծ և կենդանի մասնակցութիւն: Այն ժամանակ նա չը գիտէ թէ քնչ է երկիրդ զգացմունքը. նորա բնական ուրախութիւնը միայնակ չի թողնում նորան, նա իրան լաւ է զգում և այդ պատճառաւ չի խեղտում իւր մէջ եղած պահանջը ամեն բանի մասին պարզ յայտնելու իւր կարծիքը: Առաւել քիչ է յուսալի, եթէ արդարասիրութիւնը պահանջվում է մանուկից հեղինակութեան զօրութեամբ, որովհետև այն ժամանակ նա հասկանում է որ իրանից է կախուած բոլորովին պարզ խոստովանելու կամ թագցնելու իւր գիտեցածի մի մասը: Բայց եթէ նա չի ըզգում որ և է արտաքին ճնշողութիւն, այն ժամանակ այդպիսի միտք նորա դիտովն անգամ չի անց կենում: Մակայն մանկան հետ խիստ վարուելու ժամանակ անպատճառ հանդէս է գալիս ճնշողութիւնը. և ահա թէ քնչու մեծ զգուշութեամբ պէտք է օգտուիլ խիստ միջոցներ գործ ածելուց, ընդ նմին շարունակ գիտելով, որ դոքա չը սպանեն մանկան մէջ անկեղծութիւնը:

Երկրորդ էական միջոցը որ մանկան մէջ պարզասրտութիւն և բարեխղճութիւն է արմատացնում՝ օրինակն է: Մանկան զգածու հոգու վերայ արդէն սաստիկ ազդում են հէքիաթի ձևով պատմուած օրինակները, մանաւանդ եթէ պատմողը կարողանում է այդ օրինակները կենդանի և աշխուժով նկարագրել. առաւել ևս զօրեղ տալաւորութիւն են գործում նորա աչքի առջև կատարուող իրողութիւնները:

Մարդոց գործողութեանց մէջ ամենապարզ կերպով արտայայտուած է նոցա աշխարհահայեացքը: Թէ ինչ նշանակութիւն են տալիս նոքա կեանքի գանազան բարիքներին, թէ ինչպիսի յարաբերական նշանակութիւն ունի գանազան պարտականութեանց կատարելը, թէ ինչպէս են վերաբերվում նոքա դէպի այն մարդիկը, որոնց հետ հաղորդակցութիւն ունին, այս ամենը բաւականին հակիրճ կերպով արտայայտուած է նոցա արարքներում, և մանուկը ուշադրութեամբ գիտելով նոցա, ակամայ իւրացնում է իրեն շրջապատող անձանց աշխարհահայեացքը: Բայց եթէ կենցաղական իմաստութեան այս գործնական դասերը տարբերվում են մանուկին աւանդած տեսական խրատներից, այնուհետև, ի հարկէ վնասվում է նորա արգարասիրութիւնը և անկեղծութիւնը, նորա խիղճը բթանում է և նորանում արմատանում է այն համոզմունքը, թէ կեանքի մէջ կամայ ակամայ մարդ ստիպւում է շեղուիլ բարոյական օրէնքի խիստ պահանջներից: Միայն մանկան աչքի առաջ կատարող արարքների լիակատար ներդաշնակութիւնը նորան աւանդած տեսական խրատների հետ կցուած, մինչև ամենանուրբ մանրամասնութեանց հասցրած ներդաշնակութիւնը կարող է ծնեցնել և մանկան մէջ ցանկութիւն համոզմունքների և արարմունքների, խօսքի և գործի մէջ լիակատար ներդաշնակութեան հասնելու: Հասկանալի է որ այս բանին չի կարող հասնել դաստիարակը միայնակ, այլ սորա համար հարկաւոր է մանկան շրջապատող ամբողջ շրջանի միահամուր գործակցութիւնը: Իւր կողմից դաստիարակը պէտք է նախ և առաջ հոգայ սանիկի հետ վարուելիս ամենախիստ յաջորդականութիւն սլահպանելու, որովհետև յաջորդականութիւնն ոչ այլ ինչ է, եթէ ոչ արարմունքների մէջ մարմնացած արգարասիրութիւն:

Այն ընթերցողներին, որոնք համաձայն են վերոյիշեալ սկզբունքների հետ, ի հարկէ չի զարմացնիլ այն պահանջը, որ մենք դիտաւորութիւն ունինք այժմ յայտնելու: Յայտնի է, որ առ հասարակ կեանքը համաձայն չէ բարոյականութեան սկզբունքներին, մարդոց արարքները շատ և շատ

յաճախ հակառակում են նոցա: Անհրաժեշտ կարևոր է, որպէս զի դաստիարակը ոչ թէ դիտմամբ թագցնէր տեսականութեան և գործնականութեան մէջ եղած այս անհամաձայնութիւնը, (այդ և աննպատակ կը լինէր և անբարօրական, և կը վնասէր սանիկի զարգացմանը). բայց տնայայտան կարևոր է, որպէս զի մանուկն իմանար այդպիսի անհամաձայնութեան ըստ կարելոյն սակաւաթիւ օրինակները, որ այդ օրինակները մտնէին սանիկի գիտակցութեան մէջ իբրև բացառութիւն ընդհանուր կանոնից: Այդ անհրաժեշտ է, որպէս զի բարոյական իրէշալները կարողանային զարգանալ և արմատանալ մանկան մէջ իրենց լիակատար անարատութեամբ: Մէ էրկնչի, որ այդպիսի ճանապարհով մանուկն օրորանում է իրական կեանքից, որ այդպիսի դաստիարակութեամբ ստեղծվում է մի մարդ, որ պէտքական չէ գործնական կեանքի համար: Կեանքի և նորա պայմանների ճանաչելը կը գայ իւր կարգով. մարդս ձեռք է բերում այդ գիտութիւնը երբեմն մինչև անգամ շատ վաղ, որովհետև նա վաղ էլ ճանաչում է և այն ճնշողութիւնը, որ ստուեր է ձգում իւրաքանչիւր բարոյական անարատ ձգտման վերայ, և այն կենսական իմաստութիւնը, որ ուսուցանում է նորան բարձի թողի առնել բարոյականութեան օրէնքները: Հէնց կեանքի բարոյական իրէշալների վերայ ունեցած այդպիսի աւերիչ ներգործութեան պատճառաւ դաստիարակի համար սրբազան պարտք է հոնդիսանում պահպանելու այդ իրէշալները երիտասարդի հոգում մէջ նորան թշնամի ոյժերի յարձակմունքից, որպէս զի նա հասակն առած ժամանակը—կեանքի անբարոյական սկզբունքների հետ մարտնչելիս՝ հաստատուն նեցուկ գտնէր այդ իրէշալներում: Բարոյական ավականութիւնը առանց այդ էլ վաղ է սկսվում: Արդէն պատանին, ծանօթանալով իրականութեան հետ, հազիւ կարող է պահպանել իրան ասպակաւոր ազդեցութիւններից: չէ որ հասարակաց կարծիքը այնքան զիջող, այնքան ներողամտաբար է վերաբերվում դէպի անբարոյականութեան մի քանի նշոյլները: Սկզբում նա փոքրիկ զիջումներ է անում իւր խղճին, գուցէ սորանով ցանկանալով հեռու պահել իրան աւելի նշանաւոր յանցանքներ

րից. վերջապէս նա ընտելանում է մեծամասնութեան հայեացքներին. չէ՞ որ շարունակ կրկնուող երևոյթները դադարում են մեզ վերայ որ և է տպաւորութիւն գործելու: Սոյն այս հիմանց վերայ մեզ թւում է բոլորովին անտեղի և մինչև անգամ վտանգաւոր ծանօթացնելու սանիկներին անբարոյականութեան օրինակների հետ, նոցանում զգուանք և արհամարհանք զարթեցնելու նպատակաւ դէպի արատը: Այդպիսի տպաւորութիւնը հազիւ թէ միայնակ ձեռք բերուի, առանց ուրիշ տպաւորութեանց խառնուելուն: Արատը սովորաբար հանդէս է դալիս կամ զգուելի ձևով, որը պատճառում է մանուկին երբեմն երկիւղ և մինչև անգամ սարսափ, կամ թէ թովիչ, խաբուսիկ ձևով, մինչև անգամ երբեմն շատ հետաքրքիր, այնպէս որ տգէտ ամբոխի մէջ ծիծաղ է յարուցանում: Այդպիսի երկրորդական տպաւորութիւնները դժուար թէ հեռացուին: Առաւել ևս վատ է, ի հարկէ, եթէ դաստիարակը ծանօթացնելով մանուկին արատի հետ, կը ցանկանայ այդ բնաբանով բարոյական քարոզներ կարգալ նորա գլխին. բացի մանուկին պատճառած տաղտկութիւնից և ձանձրոյթից, նա ոչնչի չի հասնիլ:

Ուրեմն՝ եթէ հարկաւոր չէ ժամանակից առաջ ծանօթացնելու մանուկին իրական կեանքի զանազան վատ երևոյթների հետ, նոյնպէս էլ հարկաւոր չէ շատ վաղ ընտելացնելու նորան կենցաղավարութեան մէջ ընդհանրացած քաղաքավարական ձևերին. դոքա էլ կարող են ծնեցնել նորա մէջ ստուութիւն, և բացի դորանից, կը սովորեցնեն շոգոքորթութեան: Քաղաքավարութեան բառարանի հետ կարելի է ծանօթացնել մանուկին միայն այն ժամանակ, երբ նա իւր մտաւոր զարգացման առաւել բարձր աստիճանին հասած, արդէն կարող կը լինի ըստ արժանւոյն գնահատել այդ կանոնները: Մինչև անգամ հասակաւոր մարդն էլ միշտ ճիշտ կերպով չի կարող որոշել կարևոր քաղաքավարութեան սահմանը բարոյական օրէնքով պահանջած արգարասիրութեան սահմանից. արդ քնչպէս կարող է մանուկը լուծել այդ խնդիրը: Քաղաքավարութիւնից ստիպուած ֆրազների գործածելուն ընտելանալը հասակաւոր մարդուն էլ բարոյական ա-

ապականութիւն է պատճառում, ուրեմն Քնչպէս կարող է մանուկը պահպանել իրան այդ ապականութիւնից: Այդպիսի ճանապարհով ստուծեանն ընտելացած, նա ի հարկէ չի դանդաղիր իրեն ձեռք բերած հնարագիտութիւնը տարածելու, նա և ուրիշ, առաւել նշանաւոր առարկաների վերայ:

Թարգ. Գ. ՇԱՀՐՈՒԿԱՂԵԱՆՑ

Մ Ի Փ Ո Ք Ր Ի Կ

Ն Կ Ա Տ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ի Ն

Սորանից մի 15 տարի առաջ հայ դպրութեան մէջ մայրենի լիզուի ուսուցման եղանակը ներկայ եղանակից գլխաւորապէս նորանով էր զանազանուում որ՝ հին եղանակով առ հասարակ ամէն ուսումնարանում այր—բեն—գիմն էր թագաւորում: Իսկ վերջին ժամանակներումն ա—բլ—գըն եկաւ և իւր նպատակայարմար առաւելութեամբը և գիտունի ու տգէտի կողմից զրկարաց ընդունուելովը վարեց ու վանեց ասպարիզից նախկին այր—բեն—գիմը որի վերջին ջնջուած հետքը մոմի առկայծեալ լուսոյ նման՝ հազիւ մի երկու խուլ ու խաւար անկիւնում է մնացել միայն:—Չպէտք է մոռանալ ի հարկէ, և այն նորագոյն եղանակը որ մեր մանկավարժներից մէկը արդէն առաջարկել է մեր դպրոցներին, և որ իբրև նոր, նախնի եղանակներից տարբեր ու օգտաբեր, բայց միանգամայն դժուար բան՝ տակաւին շատ քիչ տեղ է մուտք գործել:

Ինչ և իցէ: Բայց մեր ուշագրութիւնը իւր վերոյ գրաւողը մի տարօրինակ երևոյթ է որ սաստիկ աչքի է ընկնում: Եւ այդ միշտ պատահում է հնից դէպի նորը անցնելիս: Երբ մարդ, յաճախ անդիտակցաբար, մի ծայրայեղութիւնից դէպի միւսն է ընկնում:

Այն օրից, երբ մեր ուսումնարաններից գուրս գնաց դարերով արմատացած այր—բենը, այն օրից, երբ այդ հին անունները ծաղր ու ծանակի առարկայ դարձան մեր ուսուցիչների մեծ մասի ձեռքում—նոցանից շատերը այն աստիճան արհամարհանքով սկսեցին վերաբերուիլ դէպի այդ նախնի յորջորջումը՝ որ հին այր—բենը բոլորովին արտաքսուեցաւ հայ դպրոցից և նորա անունը այլ ևս չյիշուեցաւ հայ ուսուցչի բերանում: Եւ ահա այսօր մեր ուսում-

նարաններից շատերի մէջ, նոյն իսկ Հինգ տարի Հայոց լեզու սովորող աշակերտները մի ընդհանուրաց զարմանքով են հանդիպում այդ անուանց արտասանութեանը:

Բայց դա մի թիւր ուղղութիւն է որ աննկատելի կերպով մըտել է մեզանում և յամառութեամբ իշխել է ուղուս:—Յիրաւի, ի՞նչ է նշանակում չորս Հինգ տարի Հայ գրերով ուսում առնել, քերականութիւն սովորել և չգիտենալ այն գրերի անունները որոնցով ձեռք է բերում այդ ուսումը:

Արգարև, որքան ծիծաղելի է, եթէ չասենք ցաւալի, որ աշակերտին մարդ բառը ինչ տառերով գրուած լինելը յայտնելու համար՝ փոխանակ ՚էն, յէ, ՚ի, ր, ասելու, մը, ու, ը, րը, ասել, Թէ վերջին եղանակով ասելիս մենք սխալուում ենք, այդ բոլորովին բացայայտ է. մինչդեռ այդպիսով մենք ոչ թէ գրերի, այլ Հնչիւնների անունն ենք տալիս. Իսկ այդ երկուսի մէջ կայ այն մեծ տարբերութիւնը, որ Հնչիւնները միայն մի ջոց են կարգաւ սովորելու համար, մինչդեռ տառերը այն տարբերքն են, որոնցից և որոնցով յօրինուել է գրագիտութիւնը:

Եւ մանկավարժութիւնը դրած նպատակին հասնելու համար այդպիսի միջոցներ միշտ գործ է ածում: Այսպէս օրինակ՝ մանուկներին քերականական գաղափարները գիւրի՛ն կերպով ըմբռնել տալու համար՝ երկար ժամանակ մէկ ու շատ և առարկայ ու գործողութիւն ենք ասել տալիս. և մինչդեռ նորա հասկացողութիւն չունին վերացական թուերի մասին, նոցա յերկու խնձոր և երեք խնձոր, ենք ասում. բայց երբ նկատում ենք որ նորա հարկաւոր եղածի չափ հասունացած են և արդէն կարող են վերացական խօսքերի իմաստը ըմբռնել, մենք նոցա եղակի ու յոգնակի, են թակալ ու ստորոգեալ և յերկու և երեք, ենք ասում:

Ինչպէս կարելի է ուրեմն որ 12, 15 տարեկան աշակերտը կամ աշակերտուհին չգիտենայ յէ ու քէնի անունը. Եւ զարմանալին այն է որ մեր ուսուցիչները չեն կարողացել տեսնել իրանց սխալը գոնէ այն հանգամանքը ինկատի ունենալով, որ լեզուն իւր արտասանութեան և հնչման օրէնքներով իւր պահանջներն է դնում ուսանողի առաջը, և հետևապէս ուսուցիչը բռնադատուած է միևնոյն նմանահնչիւն տառի երկու տեսակն էլ բացատրել ուսանողին: Եւ այսպիսով նա ստեղծել է մեծ հը (հ) և փոքր հը (չ) մեծ վը (վ) և փոքր վը (ւ), կոշտ ուր (ր) և փափուկը (ր):

Գուցէ մեր զարմանքը աւելի իրաւացի լինի, եթէ միւս կողմից ցոյց տանք որ ինչպէս տառերի անունները չգիտենալը ունի իւր անյարմարութիւնները, այնպէս էլ գիտենալը ունի իւր յարմարութիւնները և օգուտները:

Եւ ահա ի՛նչպէս:-

ա) Փոխանակ անդադար մեծ ու փոքր բառերը գործածելու, ուղղակի տառի անունը կը տանք.- եւ, յի, զի, հի-ն, և -ւ, բէ:

Մանաւանդ թէ աշակերտների պահանջը գոհ կացուցանելու համար լծորդ տառերն արտասանելիս աղատուած կը լինենք մի հնչիւնը տասն անգամ, այն էլ ամէն անգամ աստիճանաբար բարձրաձայն կրկնելուց: Է՛լ չենք յիշում այն հանգամանքը, որ գեղադրութեան ուսուցիչը ոչ թէ հնչիւնների, այլ ուղղակի տառերի հետ գործ ունի. նորա գործն այն է որ լսելիքով ըմբռնած հնչիւնը տառով մարմնացնէ և պատկերը դնէ աշակերտի տեսանելիանց առաջը:

Եւելացնենք եւ այն պարագան, որ բարձր դասատներում, որտեղ մինչ անգամ անվայել է -բ-բէնը չգիտենալը, և որտեղ նոյնպէս, մանաւանդ շարագրութեանց ժամանակ յաճախ կարող է խօսքը նկնել տառերի մասին, հնչիւններով խօսելուց բաւական անյարմարութիւն կարող է առաջ գալ:

Բ) Մեր տառերը միևնոյն ժամանակ թուարկութեան համար իբր թուեր են ներկայանում. ինչպէս ստեպ հանդիպում ենք հատուածների վերտառութեանց մէջ:

Է՛լ չենք խօսում մեր թուականի մասին, որին այնպէս շուտ շուտ հանդիպում ենք մեր հին մատենագրութեանց և առհասարակ հին գրքերի մէջ: Ի՛նչ ասել կուզէ, որ մեր տառերով ձևակերպուած թուերը ամէն քայլափոխում կարող են հանդիպել հնասէր և իւր հայրենիքի նուիրական վայրերը այցելող ամէն հայի:

Գ) Վերջապէս գալով բառարան գործածելուն, արդէն ամէն երեսայ կարող է նկատել որ գրերի անունները գիտենալը, ևս առաւել այբուբենական կարգով սովորած լինելը ամէն գրագետի համար անհրաժեշտ պարտականութիւն է:

Այսպէս ուրեմն, մեր համոզմամբ ամէն ուսուցիչ որ առաջին տարուայ աշակերտին արդէն այն աստիճանին է հասցրել, որ վերջինը կարողանում է իւր տարիքին պատշաճ վարժ կերպով կարդալ, ի՛նչ մեթոդի և հետեւելիս լինի, ի՛նչ դասագիրք և տուած լինի իւր սաների տարուայ վերջը անպատճառ պէտք է սովորեցնի նոցա տառերի ձևերը, անունները, և այն անշուշտ դարերով մեր նախնիներից մեզ հասած ու աւանդուած համակարգութեամբ այրից սկսելով, ֆէ ով վերջացնելով:

Յ. ՆԱԶԱՐԵԱՆՑ



Մ Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ա. ՏՆԱՅԻՆ ՄԱՐՄՆԱՄԱՐՉՈՒԹԻՒՆ ամեն հասակի արանց եւ կանանց համար 45 պատկերներով, շարադրութիւն բժիշկ Շրեքերի, հրատարակեց Ներսէս Սիմեօնեանց, Թիֆլիս, 1881, գինն է 40 կոպ. Բ. „ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱՍԱԿԻ“ Ֆրեօբէյեան ժողկոցների անողջապահութիւն. դասախօսութիւն դոկտ. Ա. Բաբայեանի. Թիֆլիս 1882. գինն է 20 կոպ.

գ. ԵՐԿԱՐ ԿԵԱՆՔ Եւ ՆՈՐԱ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ. Նուարթո բժշկապետի, քարգ. Տ. Յակոբ քահանայի Սուրհենեանց, Մասկվա 1882.

Այժմու դպրոցը գրեթէ ամենայն բան տալիս է մատաղ սերունդին բոցի առողջութիւնից. թէպէտ և բժշկականութիւնն անպայման առողջութիւն չի ճանաչում, այնուամենայնիւ յարաբերական առողջութիւնն հնարաւոր է համարում իւրաքանչիւր առողջ ծնուած անհատի համար: Ապաբաղդութիւնն այն է, որ այդ իսկ առողջութիւնը կորցնում է գրեթէ ամենայն մի ուսումնարան յաճախող և գիտութեան գեգերող անձն: Եւ անհասկանալի է երևում հասարակութեանը թէ ինչո՞ւ համար է ուրեմն դաստիարակութիւնը, ինչո՞ւ համար են գիտութիւնն և արուեստը, թէ՛ նշանակութիւն կարող են ունենալ մարդու համար բարոյական վսեմ սկզբունքները, երբ մարդս պէտք է հիւանդութեան համար զարգանայ, հիւանդ սերունդի համար նախապատրաստուի և իւր բոլոր կեանքը պիտի համարէ միմիայն ցաւի ու հեծութեան ասպարէզ: Այս է իսկապէս մեր ժամանակակից մատաղ սերունդի վիճակը թէ դպրոցական շրջանում եւ թէ յետոյ: Դպրոցներին և ուսուցիչներին իրաւունք է տուած՝ գիտութիւն և բարոյականութիւն առանդելու ժամանակ՝ ծանրաբեռնել աշակերտին ամենայն մտաւոր պարապմունքներով, խլել նորանից ամենայն ազատութիւն և հնար, քանի որ դպրոցումն

է, իւր կեանքի առողջութեան վերայ մտածելու՝ աւելի ուղիղն ասած դպրոցն իրաւունք ունի, կարծես, զրկել աշակերտին կեանքից իւր ուսման համար, մինչդեռ նա ուսանում է միմիայն լաւ ապրելու նպատակով: Հարիւրաւոր և հազարաւոր աշակերտներ երկու սեռից աւարտում են ուսման շրջանը ամենագովանի յառաջադիմութեամբ, փայլուն նախանձելի վկայութիւններով. նայեցէք նոցա վերայ. քնչ են նոքա — արտաքին պատկերը մի կմախք, դալուկ դէմք, տկարացած՝ ակնոցի կարօտ աչքեր, թոյլ կուրծք, դուրս եկած կուզ կամ ծուռած մէջք, ընդհատուող ձայն, անհասնող շնչառութիւն, երբեմն բոլորովին վնասուած թոքեր, վնասուած ուղեղ, բթացած ապուշ միտք..... Ի՞նչ պիտի անեն նոքա այդպիսի պարագաների մէջ իրենց սոկետառ վկայութիւնները կամ իրենց շտեմարանեալ գիտութիւնը: Ի հարկէ՝ ամէն բան կարող են շահել՝ այսինքն՝ համբաւ, գործունէութեան ասպարէզներ, պաշտօններ և այլն. սակայն մի բան նոքա մի անգամ ընդ միշտ տուժած կը լինին. այն է՝ քաջառողջ կեանքը: Ինչու. որովհետև թէ տնական և թէ մանաւանդ դպրոցական կեանքի մէջ նոցա չեն տալիս միջոց նայելու կեանքի վերայ իբրև մի անհրաժեշտ բարիքի և յարգելու այդ իւր բնական օրինաւոր սահմանների մէջ: Այս իսկ է պատճառը որ շատերն իրենց ոտքը դպրոցից դուրս դնելուն պէս, երբ ճանաչում են կեանքի արժանաւորութիւնները՝ կամ մոռանում են իրենց առած դաստիարակութիւնը և վայրենանում են՝ անձնատուր լինելով միմիայն աշխարհային անսանձ վայելչութիւնների և կամ միանգամայն մոռանում են իրենց կեանքը և օրհասական հնազանդութեամբ սպասում են իրանց վաղճանին՝ անձնատուր լինելով միմիայն մտաւոր և բարոյական մարզութիւնների: Երկու միմեանց հակառակ երևույթներ, որոնցից մէկը ժխտում է դաստիարակութեան շինարար ազդեցութիւնը, միւսը ժխտում է դաստիարակութեան և կեանքի փոխադարձ սերտ կապը: Միթէ մեր Հայոց դպրոցները տակաւին պիտի շարունակին այսպիսի երևույթներ արտագրելու:

Ներկայումս ամենայն տեղ աշխատում են դպրոցական շրջանի մէջ այնպիսի յարմարութիւններ հաստատել որ կրթւող սերունդը չստիպուի պատկերանալ երկու միմիանց հակառակ յատկութիւններով. ժամանակակից դպրոցավարութեան մէջ այդպիսով անհրաժեշտ պահանջ է ծնել մշակելու և իրագործելու առ հասարակ դպրոցական առողջապահութեան հարցեր. դոքա վերաբերում են դպրոցի տեղի ընտրութեանը, շէնքին, լուսաւորութեանը, ջերմութեան աստիճանին, օդի մաքրութեանը, աշակերտների սնունդին, հագուստին, առօրեայ մաքրակեցութեանը, բանեցուցած ուսումնական պիտոյքների յատկութեանը, նոցա խաղերին, զբօսանքներին, պարապմունքի տեսողականութեանը իւրաքանչիւր հասակին և գիտութեան համեմատ և այլն: Չնայելով որ այս խնդիրների նկատմամբ շատ շատ տարբեր կարծիքներ ու տարակուսութիւններ կարող են լինել, մանաւանդ իւրաքանչիւր առանձին տեղի նկատմամբ, այնուամենայնիւ բուն նպատակը միշտ մի է, այն է՝ աւանդել աշակերտին եղանակ իւր կեանքը առողջ պահելու և պարզ, չափաւոր ու կանոնաւոր կենցաղավարութեան գաղափարին ընտելանալու:

Հայոց մէջ առողջապահութեան խնդիրն ընդհանրապէս և դպրոցականը մասնաւորապէս, վաղուց չէ, որ մտել է գրականութեան մէջ. եթէ չենք սխալուում առաջին օրինակը տուեց «Կիլիկիա» ամսաթերթը, որ հրատարակուած էր Կ. Պօլսում 18⁷¹/₆₈ թուականներին Փարիզի բժշկական ճեմարանի դօքտոր պ. Մանուէլ Իւթիւճեանի խմբագրութեամբ: Այս թերթի մէջ հրատարակուեցաւ մի շարք յօդուածների այսպիսի վերնագրով «Տղաքներն առողջ մեծցնելու նոր դրութիւնները»: Իոցա մէջ փայլում են նշանաւոր փիլիսոփաների, բժիշկների և մանկավարժների անունները, որոնց կարգումն յիշուած են և Ռուսոյի, Հուֆէլանդի, Փրեօբէլի և այլն ենթադրութիւնները: Ռուսաստանում Հայոց պարբերական թերթերում սլատահաբար երևցած յօդուածներից զատ հանդէս եկան և առանձին հրատարակութիւններ, որոնց կարգումն են՝ ա, Խնամատարութիւն երեխայոց մարմնական և բարոյական» շարագրութիւն Կոմբի, Ս. Պետերբուրգ 1868 գինն է 50

կոպ. և բ, Կանոնաւոր և վայելուչ գրութեան տեսութիւն, Ս. Պետրբուրգ, 1873, գինն է 60 կոպ. երկուսն էլ Հանգուցեալ Մ. Մ. Միանսարեանի հրատարակութիւններն են: Սոցա շնորհիւ այն Հայ դաստիարակները, որոնք օտար լեզու չգիտէին, միջոց ունեցան ծանօթանալու մի երկու առողջապահական հարցերին բայց թէ թարգմանութիւնն և թէ Հայերէն բարբառը, որ այդ հրատարակութիւնների մէջ վատ են, և թէ մանաւանդ առաջարկած միջոցների անգործնական լինելը պատճառ եղան որ առանց նշանաւոր հետեանքի անցան դռքա: Աւելի որոշ, ամփոփ և թարմ բովանդակութիւն ունի դօքտօր Ս. Բաբայեանի մի հրատարակութիւնը «Ուսումնարանի առողջապահութեան հարցեր» վերնագրով (Թիֆլիս 1879, գինն է 1 ռ.) և նորերս լոյս տեսած նորա մի դասախօսութիւնը, որ այս տողերի ճակատում նշանակուեցաւ. առաջինն սկզբում հրատարակուեցաւ «Փորձ» հանդէսի էջերում և ապա առանձին գրքով լոյս տեսաւ: Իբրև հետևողութիւն նորագոյն հրատարակութիւնների դօքտ. Բաբայեանի այդ աշխատութիւնների մէջ մենք տեսնում ենք այն՝ ինչոր արդի մանկավարժութիւնն արեւմուտքում կ'ամ իրագործած է կ'ամ դեռ մշակում է. այդ հրատարակութիւններն այն առաւելութիւնն ունին, որ բովանդակում են իրենց մէջ՝ Ռուսաստանի Հայոց դպրոցական կեանքին ծանօթ մի Հայ բժշկի դիտողութիւններ. այդ պատճառով և դօքտ. Բաբայեանի հրատարակութիւնները կարող են շատ օգտակար լինել նոցա համար, որոնք նախանձախնդիր են իւրաքանչիւր դպրոցի կանոնաւոր ընթացքին. ուսուցիչների, տեսուչների և հոգաբարձութիւնների համար նոքա պիտանի են իբրև մի ուղեցոյց հիմնուած գիտութեան հաստատուն սկզբունքների վերայ: Մեզ մնում է միայն աւելացնել, որ առողջապահական խնդիրները գործ դնելու ժամանակ անհրաժեշտ պիտի համարուի յարգել տեղական բոլոր այն պայմանները, որոնք չեն վնասում դաստիարակութեան գործին և արմատացնում են կրթւող սերունդի մէջ խոշորակէցո-նեան, պարզո-նեան, զափա-սրո-նեան և կանոնա-սրո-նեան գաղափար կեանքի արողո-նեան համար: Մեր տեղական դպրոցը պէտք է ձգտի օգուտ

քաղել գործնական կեանքից այդ իսկ գաղափարներն իրագործելու համար այդ բոլորի վերայ պարտք են դնում կրթիւթել գաւակներին կեանքի համար այսինքն տալ նոցա միջոց նախ և յառաջ՝ առողջ լինելու և ապա՝ պարզ, խոշոր ապրուստի սովոր, կեանքի նուրբ վայելչութիւնների վերայ անտարբեր աչքով նայող և, որ ամենից գերազանցն է, ամէն վիճակի մէջ տոկուն և գործունեայ լինելու: Ներկայումս, երբ առողջապահութեան խնդիրները տեղ տեղ գործադրել են սկսում, երբ դպրոցներում «մարմնամարզարաններ» են մտցնում, և միւս առարկաների կարգում դաս են տալիս «Առողջապահութեան», երբ մինչև անգամ Ռուսաստանի Հայոց մէջ հրատարակում է և մի «Առողջապահական թերթ», ևս առաւել հարկաւոր է ուշադրութիւն դարձնել վերոյգրեալ կէտերի վերայ և նորոգութեան գործում այնպիսի հանգամանքներ ստեղծել, որոնց մասին լետոյ զղջալու հարկ չլինի:

Իպրոցական կեանքից դուրս՝ մարդուս սովորութիւնները կանոնաւորող առողջապահական միջոցներ շատ կան, ինչպէս օրինակ սաւը ջրով լողանալ, ձիով մանգալ, ոտով մանգալ, շարժումն պատճառող խաղեր խաղալ և այլն. դոցա կարգումն է և տնային մարմնամարզութիւնը. դորա չափաւոր և կանոնաւոր գործածութիւնը կարող է փրկել ամէնքին շատ մարմնական ցաւերից և նեղութիւններից. այսպիսի մարմնամարզութեան համար է հրատարակուած բժիշկ Շրեբերի շարադրութիւնը, որի անունը վերեւ նշանակեցինք: Հրատարակութեան մէջ հրահանգների հետ միասին կան և պատկերներ, որոնք ցոյց են տալիս թէ մարդս թնչ դիրք պէտք է ունենայ մարմնամարզութեան ժամանակ: Այն մարդիկ, որոնք ստիպուած են նոտական կեանք վարել, իրենց անձը շատ տկարութիւններից կազատեն և իրենց մարմնի առողջութիւնը «մինչև խոր ծերութիւնը» կը պահպանեն, եթէ հետևին «Տնային մարմնամարզութեան» հրահանգներին:

Նորերումս լոյս տեսաւ մի այլ հրատարակութիւն ևս «Երկար կեանք» վերնագրով, որից կարող են կեանքի պահպանութեան մատչելի հրահանգներ և խորհուրդներ քաղել

ամէնքը, որոնք գրքերից ուզում են սովորել առողջապահութեան կանոններ: Այդ գրքի մէջ, որ մի մաքուր և գեղեցիկ տպագրութիւն է, կան այնպիսի տեղեկութիւններ, որոնք համապատասխան են բժշկականութեան ժամանակակից պահանջներին և եթէ ճիշտ կանոն չեն կարող լինել, գոնէ լուսաբանում են շատ կենցաղական պայմաններ. նշանաւոր նիւթերն են, ի թիւս այլոց, լոյս, ջերմութիւն, օդ, մարտդութիւն, խմիչքներ, շարժողութիւն, քուն, կլիմայ, ամուսնութիւն և այլն:

Բոլոր վերոյգրեալ հրատարակութիւնները օգտաւէտ են աչալուրջ ուսուցիչներին, ծնողներին և առ հասարակ հասակաւոր ընթերցողներին համար, և երբէք կարելի չէ տալ խակ և գեռահաս ընթերցողների և աշակերտների ձեռքը:

4. ԿՈՍՏԱՆԵԱՆ

[Faint, mostly illegible text in Armenian script, likely bleed-through from the reverse side of the page. A decorative flourish is visible in the middle of the page.]

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Ք

Ինչպես ընթերցողը կը տեսնի ներկայ № ում հրատարակած խմբագրական յայտարարութիւնից, բաժանորդների սակաւութեան պատճառաւ մենք ցաւօք սրտի ստիպուած ենք առ ժամանակ դադարեցնել «ՎԱՐԺԱՐԱՆԸ», մինչեւ 1884 թ. Փետրուարի 1 ը:

Եթէ մինչեւ այդ ժամանակն էլ մեր դպրոցական գործին զուլականգնած մարդիկ էւ մեր մատաղ սերունդի առաջնորդները գործով չեն ցոյց տալ իրենց համակրութիւնը, երբ նորա իրենց ստացած տարեկան ռոճկից մի հիւսիս քուրջի մեծ ծանրութիւն էւ բեռն կը համարեն գոնելու մի մասնագիտական մանկավարժական ամսագիր պահպանելու համար, այնուհետեւ մենք մեր գործի շարունակելը աւելորդ կը համարենք:

Իսկ առ այժմ դեռ էս յոյս ունինք.

* *

Եկող 1884 թ. Յունուարի 1ից Քիֆլիզում կը հրատարակուի մի նոր հայերէն ամեօրեայ լրագիր «ՆՈՐ ԴԱՐ» վերնագրով, պ. Սպանդար Սպանդարեանի խմբագրութեամբ: Լրագիրների հետ ցրուած ծանուցմանը նայելով, նոր լրագրի պրօգրամը խոստանում է շատ հետաքրքիր լինել: Յաջողութիւն ենք ցանկանում նոր լրագրին:

* *

«Վարժարանի № 1 ում հաղորդել էինք որ Ներսիսեան Դպրոցի Հոգաբարձութիւնը միաձայն հաւանութեամբ ընտրեց տեսուչ մեծ պ. Փողոս Ղամբարեանին: Բայց այժմ մեզ հաղորդում են, որ պ. Ղամբարեանը հրաժարուել է իւր պաշտօնից էւ Հոգաբարձութիւնը ընտրել է տեսուչ մեծ պ. Սողոմոն Եղիազարեանցին էւ առաջարկել էջմիածնի

ս. Սինօղին ի հաստատութիւն: Ս. Սինօղը բարեհաճել է հաստատել նորան և պարունը ամսոյս 27 ին արդէն ստանձնեց իւր նոր պաշտօնը: Մենք մեր կողմից ցանկանում ենք պարունին յաջող և եռանդուն գործունեութիւն, որ ուսուցչական խմբի և Հոգաբարձուաց հետ ձեռք ձեռքի տուած կարողանայ տայ Ներսիսեան Դպրանոցին այն դիրքն ու նշանակութիւնը, որ վայել է նորա մեծ Հիմնադիր ՆԵՐՍԷՍ Վ դ. Կարօղիկոսի անմոռանալի յիշատակին:

*
* *

Թիֆլիզու Ս. Գայիանեան օր. դպրոցի տեսուչ պ. Ն. Խոսրովեանը հրաւիրուեցաւ ս. Եջմիածնի ձեմարանը ուսուսաց լեզուի և գրականութեան ուսուցչի պաշտօնով, իսկ նորա տեղ ընտրուեցաւ տեսուչ մեծ. պ. Սեդրակ Արարտեանցը:

*
* *

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացաւ հետեւեալ նոր հրատարակած հայերէն գրքերը 1. „Ազգայնութիւն և նորա պրինցիպները“, Հնչուածք հայութեան իբրև կուլտուրական ազգի վերայ Հ. Ա. Առաքելեանցի: 1883

2. Տիգրան Նաասարդեանցի Հայ-ժողովրդական ասանդութիւնների ժողովածուն:

3. Հայելի, բանաստեղծութիւններ Ա. Մատինեանի, և 4. պ. Արամ Մելեանցից նորա աշխատասիրած „Հայոց մեծ վարդապետ Սուրբ Մեսրոպի“ կենսագրութիւնը պատկերով. Մովս. Վարդանեանցի տպարան:

ԽՄԲԱԳԻՐ—ՀՐԱՏԱՐԱԿՈՂ Ն. Խ Ո Ս Ր Ո Վ Ե Ա Ն

Дозволено цензурою. Тифлисъ, 10 Октября 1883 г.

Типографія М. Варганяица и К. Тройце. пер. д. № 11